



«Ինվեստ Պլուս» ՍՊԸ-ի կողմից Արարատի մարզի, Մասիս համայնքի, Սիս բնակավայրի Չկնաբույժների փողոց 29 հասցեում արտադրական շենքի կառուցում և ձկնամթերքի արտադրության կազմակերպում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

(Լրամշակում)



Չեռնարկող



Լախարձող



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր տեղեկատվություն	4
2. Հավելվածներ.....	4
3. Նախնական գնահատման հայտի կազմման իրավական հիմքերը	5
4. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ	9
5. Ձեռնարկողի անվանումը, գտնվելու վայրը և նպատակը.....	10
6. Նախնական գնահատման հայտի մշակման հիմքերը	10
7. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի նկարագիրը	11
Տարածքում առկա է միայն վաղուց կառուցված պահեստային շինություն, ամբողջ տարածքը ամայի է որևէ շինություն կամ կառույց չկա:.....	16
8. Շրջակա միջավայրի բնութագրերը.....	16
8.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը.....	16
8.2. Սեյսմիկա և երկրաբանություն.....	17
8.3. Կլիմա և օդային ավազան.....	18
8.4. Հողային ռեսուրսներ.....	22
8.5. Ջրային ռեսուրսներ	24
8.6. Կենսաբազմազանություն	26
8.7 Պատմամշակութային և բնության հուշարձաններ	30
8.8 Հատուկ պահպանվող տարածքներ	31
8.9 Սոցիալ-տնտեսական	32
9. Նախատեսվող գործունեության բնութագիրը և տեխնիկական-տեխնոլոգիական լուծումները	35
10. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.....	47
11. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և վնասակար ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը.....	49
11.1. Օդային ավազան.....	50
11.2 Հողային ռեսուրսներ.....	51
11.3 Ջրային ռեսուրսներ.	52
11.4 Կենսաբազմազանություն	54
11.5 Թափոններ.....	55
11.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ	58
11.7 Աղմուկ և թրթռում.....	59
11.8 Արտակարգ իրավիճակներ	60
Էներգախնայողություն.....	61
11.9 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն, մարդու առողջություն	62

11.10 Սոցիալական.	65
11.11 Լանդշաֆտ.	65
11.12 Բարեկարգում և Կանաչապատում.....	66
12. Մոնիթորինգ.....	67
13.Բողոքների ընթացակարգ.....	68
14. Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան.....	70
15.Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ.....	91
16. Հանրային քննարկումներ	97
Գրականություն	98

1. Ընդհանուր տեղեկատվություն

Հայտ	«Ինվեստ Պլյուս» ՍՊԸ Արարատի մարզ, Մասիս համայնք, Միս բնակավայրի Ձկնաբույծների փողոց 29 հասցեում արտադրական շենքի կառուցում և ձկնամթերքի արտադրության կազմակերպում:
Ձեռնարկող	«Ինվեստ Պլյուս» ՍՊԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն	Շիրակի մարզ, Ք. Գյումրի, Վ.Սարգսյան 1 թաղմ. 89 տուն:
Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն`	Արարատի մարզ, Մասիս համայնք, Միս բնակավայրի Ձկնաբույծների փողոց 29 հասցե:
Ձեռնարկողի հեռախոս, էլեկտրոնային փոստ	Հեռ. 094148410, invest.plyus.83@mail.ru Հեռ.
Պատվիրատու	«ՇԻՆԷՔՍՊԸՏ» ՍՊԸ
Նախատեսվող գործունեության վարչական տարածքը	Արարատի մարզ, Մասիս համայնք, Միս բնակավայրի Ձկնաբույծների փողոց 29 հասցե:
Աշխատանքային նախագծի մշակող	«ՇԻՆԷՔՍՊԸՏ» ՍՊԸ
Գնահատման հայտի նախագծող	«Նովալ» ՍՊԸ
Հայտի մշակող ընկերության հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստ	Ք. Երևան, Իսահակյան 18 (093)39-77-60 noval-llc@outlook.com

2. Հավելվածներ

Հավելված 1. Տարածքի սեփականության իրավունքի վկայական` N 01112022-03-0033

Հավելված 2. Ճարտարապետա-հատակագծային առաջադրանքը

Հավելված 3. Տարածքի հատակագիծը, կոորդինատները

Հավելված 4 Արտադրամասի հատակագիծը

Հավելված 5. Համայնքի համաձայնությունը ջրհորի ջրից օգտվելու վերաբերյալ

Հավելված 6. Համայնքապետարանի տեղեկանքը շին. աղբի վերաբերյալ

Հավելված 7. Համայնքապետարանի նախնական համաձայնությունը

Հավելված 8. Հնագետի եզրակացությունը

Հավելված 9. Հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկ

3. Նախնական գնահատման հայտի կազմման իրավական հիմքերը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենք- Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն: Համաձայն Օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասի մինչև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ուժի մեջ մտնելը շարունակում են գործել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն օրենքի համապատասխան դրույթները:

Ուստի ներկայացվում է նախնական գնահատման հայտ, փորձաքննական եզրակացություն ստանալու համար:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-522-Ն (ընդունված 1999թ. և լրամշակված 2022թ.)- կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) -Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.)-Ապահովում է բուսական տեսակների

(Ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)-Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (2006)- Սահմանում է Հայաստանի Հանրապետության բնություն հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.) - Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպա-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության

դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.)-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002) - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.)- Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998)-կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը:

«Քաղաքաշինության Բնագավառում Իրավախախտումների Համար պատասխանատվության մասին» ՀՀ Օրենքը (28 ապրիլի 1999 թ.) -Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը՝ քաղաքաշինական գործունեության բոլոր փուլերում քաղաքացիների, հասարակության ու պետության շահերը պաշտպանելու, օրենսդրական ակտերի, ստանդարտների ու կանոնների պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

«ԿԵՆԻ ՄԱՍԻՆ» ՀՀ Օրենքը (21 հունիսի 2014 թ.)- կարգավորում է կերի և կերային հավելումների ներմուծման և արտահանման, արտադրության (ներառյալ՝ առաջնային), արտադրության անվտանգության ապահովման, պահման, պահեստավորման, փոխադրման, օգտագործման, իրացման, մակնշման, փաթեթավորման և գովազդի հետ կապված հարաբերությունները:

«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքը (2011թ.)- կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման սկզբունքները, աղբահանության վճարը, դրա դրույքաչափերը, վճարողների շրջանակը, նրանց իրավունքները և պարտականությունները, վճարման կարգը, պատասխանատվությունը չվճարելու, պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման կարգը աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման բնագավառներում:

ՀՀ կառավարության որոշումներ

- ❖ **ՀՀ կառավարության 19 նոյեմբերի 2014թ.** «Հանրային ծանուցման եվ քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» N1325-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 29 հունվարի 2010թ.** «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N72-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 29 հունվարի.2010թ.** «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 8 սեպտեմբերի 2011 թվականի** «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1622-Ն որոշումն ուժը կարգրած ճանաչելու և 2001թվականի ապրիլի 12-ի N 286-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N1396-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008թ.** «Հայաստանի հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 15 մարտի 2007թ.** «ՀՀ Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» N 385-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 31 հուլիսի 2014թ.** «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N 781-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 2019թ. հունվարի 17-ի** «ՋՐԱԽՆԱՅՈՂ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՑ ԲԽՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 39-Լ որոշում:

4. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի համաձայն գործունեություն, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության:

Համաձայն Օրենքի՝ գործունեությունները դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա և Բ: Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա ենթակետի Քաղաքաշինության բնագավառում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա են. «Քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 1500 քմ և ավելի, վերգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով կամ 2000 քմ եւ ավելի ստորգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով»: Նախատեսվող արտադրական շինությունները տեղակայվելու են 2,08 հա տարածքի վրա և կառուցապատման մակերեսը գերազանցում է 1500քմ-ն, ուստի սույն նախատեսվող գործունեությունը ներառված է Բ կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության է ենթակա Բ կատեգորիայի ընթացակարգով:

Արտադրական շենքերը կառուցվելու են «ձկնամթերքի արտադրություն կամ վերամշակում» իրականացնելու համար, որը համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 7-րդ կետի Ե. ենթակետի. ենթակա է ՇՄԱԳ փորձաքննության՝ «ձկնամթերքի արտադրություն կամ վերամշակում», որոնց պատրաստի արտադրանք արտադրելու հզորությունը գերազանցում է օրական 30 տոննան»: Նախատեսվող գործունեության արտադրական առավելագույն հզորությունը կազմում է 51տ/օր, որից ձկնամթերքի պատրաստի արտադրանք արտադրելու արտադրություն՝ օրական 20-27 տոննա, կերի արտադրությունը՝ 24տ/օր, այսինքն նշված գործունեությունը նույնպես ենթակա ՇՄԱԳ-ի և փորձաքննության, Բ կատեգորիայի ընթացակարգով: Նախնական գնահատման հայտը ներկայացվել է /համաձայն Օրենքի 16-րդ հոդվածի, 4-րդ մասի պահանջների/, Օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով՝ մինչև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ուժի մեջ մտնելը շարունակում է գործել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի համապատասխան դրույթները:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է երկու փուլով: Ներկա փուլում նախատեսվում է միայն ձկնամթերքի և կերի արտադրամասերի կառուցում և իրականացում, հաջորդ փուլում հնարավոր է նաև այլ նախատեսվող գործունեություններ, ինչը, փորձաքննության ենթակա լինելու դեպքում, օրենսդրությամբ սահմանված կարգով կներկայացվի փորձաքննության:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա

հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ՝ հնարավոր բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելուն կամ բացառելուն ուղղված: Նախնական գնահատման հայտը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

5. Ձեռնարկողի անվանումը, գտնվելու վայրը և նպատակը

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է «Ինվեստ Պլյուս» ՍՊԸ-ի կողմից, որի իրավաբանական հասցեն է՝ Շիրակի մարզ, Բ. Գյումրի, Վ.Սարգսյան 1 թաղմ. 89 տուն: Արտադրամասերի և պահեստային շինության կառուցումը նախատեսվում է իրականացնել Արարատի մարզ, Մասիս համայնքի Սիս բնակավայրի Ձկնաբույծների փողոց 29 հասցեում: Նախատեսվող գործունեության նպատակն է կառուցել արտադրական և պահեստային շենքեր՝ ձկնամթերքի արտադրության կամ վերամշակման, նպատակով, ինչպես նաև իրականացնել ձկնամթերքի որակյալ և արդյունավետ արտադրություն:

Տարածքի հողի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ գյուղատնտեսական կամ արտադրական օբյեկտների :

6.Նախնական գնահատման հայտի մշակման հիմքերը

Ձկնաբույծների փողոց 29 հասցեում Ձկան վերամշակման և կերի արտադրամասերի կառուցման Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է հիմք ընդունելով.

- արտադրամասերի նախագծային փաստաթղթերը,
- տարածքի ինժինեռաերկրաբանական հետազոտությունների հաշվետվությունը,
- համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները,
- սեփականության վկայականը՝ 01112022-03-0033:
- ճարտարապետահատակագծային առաջադրանքը՝ N CPP0-0000-7608 տրված՝ 02.08.2023թ.:

7. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի նկարագիրը

Արտադրամասերի կառուցապատման ենթակա տարածքը գտնվում է Արարատի մարզ, Մասիս համայնք, Միս բնակավայրի Ձկնաբույծների փողոց 29 հասցեում:

Իրավունքի տեսակը՝ սեփականություն: Համաձայն Ճարտարապետա-հատակագծային առաջադրանքի՝ հողի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ գյուղատնտեսական կամ արտադրական օբյեկտների:

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է մարզկենտրոնից 26 կմ հեռավորության վրա: Բնակավայրն ընկած է Հրազդան գետի աջ ափին: Ծովի մակարդակից ունի 828 մ բարձրություն: Հողամասի մակերեսը 2,08 հա է:

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքը գտնվում է Միս բնակավայրից 94,2մ, մոտակա բնակելի տնից՝ 215,6մ, Մասիս համայնքից՝ 1920,8մ, տեղական նշանակության ավտոճանապարհից՝ 65մ հեռավորությունների վրա:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ընկերության սեփական տարածքում, որտեղ առկա է պահեստային շինություն: Տարածքում կատարվել են նախապատրաստական աշխատանքները՝ կապված ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների հետ: Գործունեության ենթակա տարածքում բացակայում են ինժեներական ենթակառուցվածքները՝ էլեկտրամատակարարման, ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերը:

Կատարվել են տարածքի ինժեներաերկրաբանական ուսումնասիրություններ՝ «Հայր և որդի Տիտիզյաններ» ՍՊԸ կողմից տրվել է ինժեներաերկրաբանական եզրակացության:

Շրջանի երկրաբանական պայմանները Ըստ ֆոնդային նյութերի և տարածաշրջանի մանրամասն տեղագնման, տարածքի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցում են Էլուվիալ-Դելյուվիալ-պրոլյուվիալ և լճային ալյուվիալ-դելյուվիալ և պրոլյուվիալ ծագման նստվածքներ, որոնք ներկայացված են ավազակավերով, կավավազներով ճալաքարակոպճային գրունտներով:

Շրջանի կլիմայական պայմանները ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և քանի որ ուսումնասիրվող տարածքը գտնվում է Արարատի մարզում, ուստի բերում ենք նրա համապատասխան կլիմայական ցուցանիշները: Ուսումնասիրվող տարածքը գտնվում է «տաք կլիմայական շրջանում: Կլիման չոր, խիստ ցամաքային է:

Ստորև աղյուսակի տեսքով բերվում է մի քանի կլիմայական տվյալներ.

- Տարեկան միջին ջերմաստիճանը 11.8 °C
- Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը 43°C
- Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -29°C
- Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 250-350մմ:

- Քամու միջին տարեկան արագությունը 0.4մ/վ:
- Գրունտի սառչման առավելագույն խորությունը, կազմում է 50 սանտիմետր:

Հիդրոերկրաբանական տեսակետից քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ և ծակոտկենությամբ, ուստի շնորհիվ դրանց ստորգետնյա ջրերը գտնվում են խորը հատվածներում: Ստորերկրյա ջրերի ձևավորումը կատարվում է մթնոլորտային տեղումների ներծծմամբ: Տվյալ տարածքում գրունտային ջրերը ըստ ֆոնդային տվյալների գտնվում են 4.0մ-ից խորը հորզոններում:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում բացակայում են:

Շրջանի սեյսմիկ պայմանները

Համաձայն ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի տեղագնվող շրջանը գտնվում է I սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max}= 0.3g$ արագացմամբ, 9 և ավելի բալլ սեյսմիկությամբ:

Շրջանը գտնվում է Արարատյան դաշտում՝ Միջին-Արաքսյան ճկվածքում և ներկայացված է հզոր միոցենային նստվածքներով:

Տարածքի ինժեներաերկրաբանական կառուցվածքը

Ուսումնասիրվող տարածքի երկրաբանական կտրվածքը ուսումնասիրվել է, ակնադիտական եղանակով, բնական մերկացումների և արխիվային նյութերի հիման վրա: Ուսումնասիրվող տարածքում առանձնացվել է գրունտների երկու շերտ: Ստորև բերվում է այդ շերտերի լիթոլոգիական նկարագրությունները և նրանց ֆիզիկա-մեխանիկական հատկությունները:

Շերտ 1: կավեր շագանակագույն, թույլ և միջին խոնավ, պինդ թանձրությամբ, խճի ու խճավազի մինչև 20-25% պարունակությամբ: Շերտի հզորությունը 0.0-1.50մ է:Դեյլովիալ-պրոյուվիալ առաջացումներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՄՆԻՊ IV-5-82-ի (8գ) III կարգ է:

Շերտ 2: Ալյուիվալ ծագման լավ գնդավորված ճալաքարա-կոպճային նստվածքներ, տեղ-տեղ գերխոնավ, 10-15% գլաքարով և մոտ 20% խառնավազի և ավազակավի լցանյութով: Շերտի հզորությունը 1.50-5.0մ է: Բեկորային նյութը տարակազմ է, լավ և միջին հղկվածության: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՄՆԻՊ IV-5-82-ի (6դ) V կարգ:

Եզրահանգում: Ուսումնասիրվող տեղամասում գրունտները բարենպաստ են շինարարական աշխատանքների կատարելու համար, որպես հիմնատակ առաջարկվում է շերտ 1-ը /կավային գրունտ /, որոնք սեյսմիկ հատկությամբ ըստ (ՀՀՇՆ 20.04.2020թ-ի) 3-րդ կարգ են:


- ✓ Դիմադրությունը $R_0=2.0կգ/սմ^2$
- ✓ Ընկրկելիության գործակիցը $k_p=2500 տ/մ^3$

շերտ 2-ը /ճալաքարակոպճային գրունտ /, որոնք սեյսմիկ հատկությամբ ըստ (ՀՀՇՆ 20.04.2020թ-ի) 2-րդ կարգ են:

- ✓ Դիմադրությունը $R_0=4.0կգ/սմ^2$
- ✓ Ընկրկելիության գործակիցը $k_p=6000 տ/մ^3$

Տարածքի իրադրության սխեմանները


Գծապատկեր 1




N	X	Y
1	8446470.8045	4436836.1841
2	8446522.7937	4436694.2049
3	8446443.4953	4436611.1083
4	8446419.1767	4436675.3837
5	8446405.9807	4436670.5537
6	8446355.6131	4436803.2691

Կերի արտադրամաս

Գծապատկեր 2




Գծապատկեր 3
Ձկան վերամշակման արտադրամաս



Գծապատկեր 4

Պահեստային տարածք



Տարածքում առկա է միայն վաղուց կառուցված պահեստային շինություն, ամբողջ տարածքը ամայի է որևէ շինություն կամ կառույց չկա:

8. Շրջակա միջավայրի բնութագրերը

8.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը

ՀՀ Արարատի մարզը գտնվում է Հայաստանի հարավ-արևմուտքում: Հյուսիս-արևմուտքից սահմանակից է Արմավիրի մարզին, հյուսիսից՝ Երևան քաղաքին ու Կոտայքի մարզին, արևելքից՝ Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզերին, հարավից՝ Նախիջևանին, հարավ-արևմուտքից՝ Թուրքիային: Մարզի հարավ-արևմտյան եզրին 6-13կմ լայնությամբ ընկած է Արարատյան հարթավայրի հարավ-արևելյան մասը: Մարզը հյուսիսից, արևելքից և հարավ-արևելքից եզրավորվում է Արագածի և Գեղամա լեռնազանգվածներով, Ուրծի շղթայով, իսկ հարավից և արևմուտքից՝ Հայկական պարով, Մեծ և Փոքր Մասիսներով:

Նկար 1.



Արարատի մարզի տարածքը եղել է պատմական Հայաստանի Այրարատ նահանգի Ոստան գավառի մի մասը: Այստեղ էին գտնվում Արտաշատ և Դվին մայրաքաղաքները:

Արարատի մարզը սահմանակից է Թուրքիային և Ադրբեջանի կազմում գտնվող Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանը: Մարզը զբաղեցնում է 2090 կմ² տարածք՝ ՀՀ տարածքի 7%-ը: Մարզն իր մեջ ընդգրկում է Արարատի, Արտաշատի և Մասիսի տարածաշրջանները՝ 4 քաղաքային և 93 գյուղական բնակավայրերով: Մարզկենտրոնը Արտաշատ քաղաքն է: Արարատի մյուս քաղաքներն են՝ Արարատը, Մասիսը և Վեդին:

Տարածաշրջանին բնորոշ են հին ծալքավորումների մնացորդները, տեղ-տեղ լճապյուվիալ և պրոյուվիալ նստվածքների տակից երկրի մակերես են դուրս գալիս մի քանի տասնյակ մետրի հասնող բլուրների տեսքով: Տարածաշրջանին բնորոշ են հզոր, տեղ-տեղ մինչև 400 մ, լճագետային, այլուվիալ-պրոյուվիալ նստվածքները, լավային շերտերը, ձգվելով Ախուրյանի գետաբերանից մինչև Գայլի դրունք հովիտը: Տարածքի ամենացածր կետը Արաքս գետի հունի մոտ է՝ 801մ, ամենաբարձրը կետը հյուսիս-արևելքում գտնվող Սպիտակասար լեռնագագաթն է՝ 3555,7մ բարձրությամբ: Տարածքի բլրոտ, է մոտ 30%-ը հարթավայրային է:

Տարածաշրջանի լանդշաֆտային գոտին կիսաանապատային է՝ անապատային տեղամասերով: Այն բաժանվում է երկու մասի՝ հարթավայրային և լեռնային: Հարթավայրային մասը՝ 10-15կմ լայնությամբ ձգվում է Հրազդան գետից մինչև ՀՀ Պետական սահման: Մարզի լեռնային մեծ մասը զբաղեցնում են Գեղամա լեռների լանջերը և Ուրծի ու Երանոսի լեռները: Այստեղ առանձին կղզյակներով պահպանվում է անտառը, որը հիմնել է հայոց Խոսրով Կոտակ թագավորը, IV դարում՝ այժմ Խոսրովի արգելոցը:

8.2. Սեյսմիկա և երկրաբանություն

ՀՀ Արարատի մարզում առկա են սողանքային գոտիներ, որոնք կազմում են հանրապետության սողանքային տարածքների 2,5%-ը: Սողանքային երևույթները զարգացած են հիմնականում հյուսիս-արևելյան մասի նախալեռնային բնակավայրերում՝ մոտ 3 սողանքային օջախ, ընդհանուր 13094 հա տարածքով:

Մարզը գտնվում է ոչ ակտիվ սեյսմիկ գոտում և սողանքների ակտիվացումը հիմնականում կրում է սեզոնային բնույթ կապված՝ գրունտային զանգվածների գրավիտացիոն տեղաշարժի հետ:

Համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»-ի՝ ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի՝ ուսումնասիրվող տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ $A_{max}=0,4g$:



8.3. Կլիմա և օդային ավազան

Արարատի մարզը ծովի մակարդակից գտնվում է 800-2300մ բարձրությունների վրա: Տարածաշրջանում առկա են ՀՀ-ում տարածված կլիմայի 8 տիպերից 6-ը՝ չոր ցամաքային, չոր խիստ ցամաքային, չափավոր ցամաքային, բարեխառն, ցուրտ լեռնային, ձյունամերձ, պայմանավորված լեռնային մակերևույթի առանձնահատկությամբ:

Գտնվում է տաք կլիմայական գոտում, կլիման խիստ չոր ցամաքային է՝ ամառը շոգ, առավելագույն ջերմաստիճանը հաճախ բարձրանում է մինչև $+41^{\circ}\text{C}$, ձմռանը ցուրտ, անամպ, անհողմ, առավելագույն նվազագույնը ջերմաստիճանը՝ մինչև -30°C : Բնորոշ են լեռնահովտային քամիները: Հաստատուն ձնածածկույթ չի ձևավորվում: Մթնոլորտային տեղումների քանակը կազմում է $20^{\circ}-30^{\circ}$ մմ: Տարածաշրջանն ունի բարենպաստ կլիմայական գոտիներ կապված՝ լույսի և ջերմության առատության հետ:

Մթնոլորտ վնասակար արտանետումների աղբյուրներ են հանդիսանում արտադրական ձեռնարկությունները, ավտոտրանսպորտի և էներգետիկայի օբյեկտները:



Գործունեության տարածքի կլիմայական պայմաններն ներկայացված են ըստ քաղաքաշինության նախարարության ՀՀԾՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթղթի: Համաձայն նշված փաստաթղթի Արտաշատ քաղաքի կլիմայական բնութագրերն են.

Աղյուսակ 1.

Օդի ջերմաստիճանը, °C

Բնակավայրի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի միջին ամսական, ըստ ամիսների °C												Միջին տաքե-կան	Բացար-ձակ նվազա-ձակ	Բացար-ձակ առավե-ձակ
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Արտաշատ	829	-3.6	-0.9	5.6	12.7	17.5	21.5	25.3	24.8	19.8	13.0	6.0	-0.6	11.8	-29	43

Օդի հարաբերական խոնավությունը (%)

Աղյուսակ 2

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը. %												Միջին տարեկան	միջինը ժամը 15-ին	
	ըստ ամիսների													ամենա-ցուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Արտաշատ	78	73	63	58	59	54	51	52	57	68	73	79	64	64	32

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական մմ օրական առավելագույնը												Չյան ծածկույթը			
	Áëï³ÙÇëÝ»ñÇ												տասնօրյա առավելագույնը, մմ	օրերի թիվը	ջրի առավելագույն քանակը Չյան մեջ, մմ	
	I	II	III	IV	V	VI	VI I	VIII	IX		I	II				տարեկան
Արտաշատ	8	18	27	36	40	25	11	6	10	22	24	17	257	40	36	64
	8	1	20	32	36	43	34	27	22	28	36	31	25	43		


Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշումը, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % ըստ ուղղությունների								Անհող մութային կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
			Միջին արագությունը, մ/վ												25	50	100
			Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավային (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Արտաշատ	920,2	հունվար	7	8	10	20	12	10	15	18	88	0,3	0,4	7	21	24	26
		ապրիլ	4	9	12	27	13	8	13	14	74	0,6					
		հուլիս	8	7	9	16	9	9	18	24	80	0,4					
		հոկտեմբեր	7	12	12	19	8	10	16	16	85	0,3					
			1,7	1,7	2,7	3,1	2,4	2,0	2,2	1,7							
			1,7	1,8	2,1	2,8	2,5	2,8	2,8	2,6							
			1,7	1,9	1,7	2,0	2,0	2,0	2,7	2,3							
			1,6	1,5	2,1	2,0	1,5	2,1	2,4	2,0							

Համաձայն ներկայացված փաստաթղթի՝ ծովի մակարդակից միջև 1200մ բարձրություններում ամառը՝ շոգ է, չոր, միջին ջերմաստիճանը հուլիսին՝ 21°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 35% ցածր, բարենպաստ լեռնահովտային քամիներ՝ միջին արագությունը 2,0-3,0 մ/վ: Ձմեռը՝ ցուրտ, անհողմ, միջին ջերմաստիճանը

հունվարին 0°C-ից մինչև մինուս 5°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին) 60-70%, քամու միջին արագությունը՝ 2,0- 3,0 մ/վ:

Նկար 4



Օդային ավազան. Արարատի մարզում օդային ավազանի աղտոտումը կապված է տարեց-տարի ավելացող տրանսպորտային միջոցների, արտադրական և կենցաղային արտանետումներից, համայնքների աղբավայրերում կուտակված պոլիէթիլենային թաղանթների այրումից առաջացած թունավոր նյութերից: Օդային ավազանի աղտոտվածության մոնիթորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» (ՀՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից: Քանի որ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տեղեկագրերում բացակայում է Մասիս համայնքի օդային ավազանի վերաբերյալ տեղեկատվություն, ուստի այն ներկայացվում է Ըստ Հայկումոնիտորինգ ձեռնարկ-ուղեցույցի1 և ըստ բնակչության թվաքանակի համաձայն օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները2 –ի/ժամկետանց են/: Մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին է դասվում Մասիս բնակավայրը, օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.2 մգ/մ³
- Ծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ³

- Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ³
- Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ³:

8.4. Հողային ռեսուրսներ

Արարատի մարզին հիմնականում բնորոշ են բնական կիսանապատային՝ անապատային տեղամասերով լանդշաֆտային գոտիները: Անապատի համար բնորոշ այս հողերի առաջացմանը նպաստել են կլիմայի չորությունը և բուսական ծածկույթի աղքատությունը: Կիսանապատային գոտին գերակայում է Արարատյան հարթավայրում, իսկ միջին բարձրության լեռներում գերակայում են չոր տափաստանային, գեղամա լեռնաշղթայի լանջերին՝ ալպյան գոտիները:

Տարածաշրջանում գերակշռում են բաց շականակագույն, գորշ, տեղ-տեղ աղակալած կիսանապատային հողերը, որոնք աստիճանաբար վերածվել են մշակովի հողերի: Կիսանապատային հողերն ունեն հիմնականում կավավազային մեխանիկական կազմ, փոշե-հատիկային ստրուկտուրայով: Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին: Կախված ռելիեֆի պայմաններից և երոզիայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողերով: Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով: Կիսանապատային գորշ հողերին բնորոշ է հումուսային հորիզոնների ոչ մեծ հզորությունը (25-40 սմ), պրոֆիլի քարքարոտությունն ու կմախքայնությունը: Պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ (հողի վերին շերտերում՝ մինչև 8-18 %, իսկ ենթահողում՝ հաճախ մինչև 30-40 %): Կիսանապատային գորշ հողերի պրոֆիլի միջին մասերում ձևավորվում է կարբոնատային ցեմենտացած հորիզոն՝ 15-30 սմ հզորությամբ, որը խանգարում է մշակաբույսերի նորմալ զարգացմանը: Անստրուկտուր են, հումուսի պարունակությունը տատանվում է 1,5-2,0 %-ի սահմաններում: Ունեն թույլ և միջին հիմնային ռեակցիա (pH=7,5-8,5): Այս հողերը շարժուն ազոտով՝ թույլ, ֆոսֆորով՝ թույլ և միջակ, կալիումով՝ միջակ և լավ են ապահովված:

Մարզի գյուղնշանակության հողերը կազմում են 156,901,71հա:

Արաքսի և նրա վտակների փուխր բերվածքներում ձևավորվել են հումուսով աղքատ գորշ հողեր՝ բաց գորշագույն հողեր ու տիպիկ գորշահողեր՝ աղակալած տարածքներով, ցածրադիր ողողատներում՝ գերխոնավ հողերն ու ճահճուտները: Լճային նստվածքների հզորությունը հասնում է մի քանի տասնյակ մետրի:

Մարզի հողատարածքների ոռոգումն ապահովելու նպատակով կառուցված են Մխչյանի, Ազատի, Արմաշի, Քաղցրաշենի, Մասիսի, Արագածի խոշոր ջրհան կայանները:




Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես պտղաբուծության(ելակ, ծիրան, խաղող), բանջար-բոստանային մշակաբույսների արտադրության, այնպես էլ խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծության, խոզաբուծության և թռչնաբուծության համար:

Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով: Հողերի որակի գիտահատումն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի և ՀՀ Առողջապահության նախարարի 2015թ. հունիսի 16-ի «ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն:

Համաձայն Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2022թ. տարեկան տեղեկագրի՝ հողային ծածկույթի ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներ են կատարվել նաև Արարատի մարզում: Ներկայացվում է աղտոտվածության տվյալները աղյուսակով և գրաֆիկական սխեմաներով:

Մարզ/ Քաղաք	Վանադիում	Պղինձ	Ցինկ	Քրոմ	Նիկել	Արսեն	Կապար
Արարատ	1.2	11.0-14.7	2.9-4.3	8.0-11.3	13.8-17.5	3.5-6.5	-



Փձապատկեր 128. Որոշ մարզերի հողային ծածկությունում մետաղների պարունակությունը, 2022թ.

8.5.Ջրային ռեսուրսներ

Արարատի մարզի գետերը պատկանում են Արաքս գետի ավազանին: Մարզի ջրային ռեսուրսները ձևավորվում են 4 գետերով, տարածքով են հոսում՝ Արաքս, Հրազդան, Ազատ, Վեդի խոշոր գետերը, համեմատաբար փոքր գետերից՝ Արածոն, Չորասու հեղեղատարը, Ազատի ու Վեդի գետերի վտակները՝ Քաջառուն, Խոսրովը, և այլն: Արարատյան հարթավայրով անցնող գետերը ունեն ոռոգիչ նշանակություն: Ազատ գետի վրա Լանջազատ գյուղի մոտ կառուցված է Ջովաշենի ջրամբարը/70մլն մ³/ և համանուն ՀԷԿ-ը, Արածո գետի վրա՝ Զանգակատան ջրամբարը/15մլնմ³/: Մարզում 19-20-րդ դարերում կառուցվել են Կախանովի և Արատաշատի ջրանցքները:

Արարատի մարզի Մասիս համայնքի տարածքով են անցնում Հրազդան գետը, հարակից՝ Այդր լճից սկիզբ առնող Սև ջուր գետը, հարավում՝ պետական սահմանի երկարությամբ՝ Արաքս գետը, որը հորդանում է գարնանը, երբեմն դուրս գալով ափերից: Համայնքից հարավ գտնվում են արհեստական լճակներ: Մարզն ունի բնառեսուրսային՝ հողային ջրային ներուժ՝ կապված արտեզյան ջրհորների առկայության և Հրազդան գետի հետ:

Վեդի գետի երկարությունը կազմում է 58կմ, ջրհավաք տարածքը՝ 998 կմ², հոսքը՝ 64 մլն մ³: Ազատ գետի երկարությունը 56 կմ է, ջրհավաք տարածքը՝ 952 կմ², հոսքը՝ 217 մլն մ³: Կան բազմաթիվ դրենաժային ցանցեր և խորքային հորեր:


Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքի ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով, սնումը ձնհալքային է, անձրևաջրերից գետերը գարնանը վարարում են: Ամռանը որոշ գետեր ցամաքում են:

Մարզում առկա են հանքային ջրեր՝ Արարատ և Վեդի բնակավայրերում:

Հայաստանի Հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, համաձայն՝ ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման 12.1 հավելվածի համաձայն:



Արարատյան ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 12 դիտակետում, այդ թվում՝ 11 գետային և 1 ջրամբարային (Ազատի ջրամբար): Համաձայն Շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների մասին 2023թ. 2-րդ եռամսյակի տեղկագրի՝ Վեդի գետի ջրի որակը Արարատից ներքև ապրիլին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մայիսին՝ «միջակ» (3-րդ դաս): Ազատի ջրամբարի ջրի որակը հունիսին գնահատվել է «լավ» (2րդ դաս):



Գործունեության և հարակից տարածքներում մակերևութային ջրերը բացակայում են, իսկ ստորերկրյա ջրերը գտնվում են 4մ-ից ավել խորության վրա:

8.6. Կենսաբազմազանություն


Տարածաշրջանի բնական լանդշաֆտը կիսաանապատային, անապատային և լեռնահարթավայրային է: Մարզում անտառածածկ տարածքներ գրեթե չկան, անտառապատ տարածքները կազմում են տարածքի 0,1%-ը: Տարածքին բնորոշ են չորասեր ու աղասեր բույսերը, գյուղատնտեսական նշանակության մշակաբույսերը: Խոնավ վայրերում աճում են եղեգներ: Համաձայն ՀՀ կառավարության 2015թ. դեկտեմբերի 10-ի «Հայաստանի հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N 54 արձանագրության՝ Հայաստանի ֆլորան այժմ ներկայացված է շուրջ 3800 տեսակի անոթավոր բույսերով՝ 160 ընտանիքից և 913 ցեղից:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության Կենսաբազմազանության պահպանության, օգտագործման և վերարտադրության ռազմավարության և գործողությունների պետական ծրագրի» Արարատի մարզի տարածքում ՀՀ Կարմիր գրքում ներառված են 137բուսատեսակ, կենդանատեսակներից՝ 51 անողնաշարավոր կենդանիներ, 92 ողնաշարավոր տեսակներ:

Համաձայն Արարատի մարզի 2017-25թթ. զարգացման ծրագրի՝ Հայաստանի

բուսատեսակներից կեսն աճում է Արարատյան դաշտավայրում և մոտակա լեռնաշղթաներում: Մարզում բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված և էնդեմիկ տեսակներից աճում են ծիածանաթաղանթը, թրաշուշանը, վարդակակաչը և այլն: Կենդանատեսակներից՝ վարազը, արքայական եղջերուն, վայրի խոզը, լեռնային այծը և այլն: Արարատյան հարթավայրի ջրաճահճային հանդակները բնադրավայր ու ապրելավայր են հանդիսանում թռչունների ավելի քան 200 տեսակի համար: Արարատյան դաշտում ձկնային տնտեսությունների կողմից ստորգետնյա ջրերի ոչ արդյունավետ օգտագործումը հանգեցրել է բազմաթիվ աղբյուրների և ջրաճահճային տարածքների չորացման, որոնք կենսամիջավայր էին հանդիսանում կենդանական և բուսական աշխարհի բազմաթիվ ներկայացուցիչների համար:

Նկար 8.



Բուսական աշխարհ. մարզի տարածքում գերակշռում են կիսաանապատային և անապատային չորասեր բուսատեսակները, իսկ ցածրադիր, ճահճապատ տարածություններում՝ եղեգնի մացառուտները: Հալոֆիլ անապատներին բնորոշ բույսերն են՝ սոլերնո (*Salicornia europaea*), կալիդիում (*Kalidium caspicum*), աղահասկ (*Halostachys*

caspica), բորակաբույս (Nitraria schoberi): Գիպսֆիլ անապատները բնորոշ են արաքսյան հարթավայրը շրջապատող լեռնաշղթային (Երանոս, Երախ, Ուրց): Գիպսֆիլ անապատներին բնորոշ բույսեր են՝ սապնարմատ (Gypsophila) ցեղի ներկայացուցիչները, հալանտիումը (Halanthium rarifolium), մոլոկան Թախթաջյանի (Lactuca takhtadzhianii), զուգատերև (Zygophyllum atriplicoides) և այլն: Տարածաշրջանում հանդիպում են նաև՝ գեղածնկիկ մատիտեղանման (Calligonum polygonoides), հազարատերևուկ նեղատերև (Achillea tenuifolia), եղջերախոտ, եղնաբղեղ ավազուտային (Ceratocarpus arenarius), զեյդլիցիա ծաղկավոր (Seidlitzia florida): Աճում են նաև այլ չոր բույսեր՝ տերեփուկ, երիցուկ, իշակաթնուկ՝

ՀՀ կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված բուսատեսակներից են՝ Խնկեղեգ ճահճային (Acorus calamus L.), հացհամեմ գլխիկավոր (Trigonella capitata Boiss.), Հիրիկ մուսուլմանական (Iris musulmanica Fomin), Բիեներցիա շուրջաթև (Bienertia cycloptera Bunge), Միկրոկնեմում մարգանանման (Microcnemum coralloides), Կոմուխ Օշեի (Inula aucheriana DC) և այլն:

Նկար 9.



Չիրիկ մուսուլմանական - *Iris musulmanica Fomin*



Կոմուխ Օշեի - *Inula aucheriana DC.*

Մասիսի տարածաշրջանին բնորոշ են օշինդրը, անթառամը, օշանը, հավամրգին:

Կենդանական աշխարհ. կենդանական աշխարհին բնորոշ են կիսաանապատային ցամաքային էկոհամակարգին բնորոշ կենդանատեսակները: Տարածաշրջանում հանդիպում են անողնաշարավոր կենդանիներից 51, իսկ ողնաշարավորներից 92 տեսակ: Տարածաշրջանում ողնաշարավոր կենդանիներից հանդիպում են՝ գորշուկը, նապաստակը, ճահճակուղբը, ժայռային մողեսը, լորտու սովորականը, դաշտամուկը, քարակզաքիսը և այլն: Անողնաշարավորներից հանդիպում են՝ անձրևատորը, մրջյունը, ծղրիդը, ճոխկը, մորեխը և այլն: Սողուններից հանդիպում են գյուրգա, հայկական իժ, լորտուներ, Արևմտյան վիշապիկը (Eryx jaculus) և այլն: Թռչուններից հանդիպում են տնային ճնճղուկը մոխրագույն ագռավը

Թռչունները ներկայացված են բաց տարածքներին բնորոշ տեսակներով՝ տնային ճնճղուկը (Passer domesticus), մոխրագույն ագռավը (Corvus corone), անտառային արտույտը (Lullula arborea), գյուղական ծիծեռնակը (Hirundo rustica), եղինջաթռչնակը (Troglodytes troglodytes), ժայռային ծիծեռնակը (Ptyonoprogne rupestris): Գետերի իխտիոֆաունան ներկայացնում են բրամը (Abramis brama), ծածանը (Cyprinus carpio), սովորական լոքոն (Silurus glani) և այլն: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ:

Տարածաշրջանի կիսաանապատներում հանդիպում են բազմաթիվ էնդեմիկ անողնաշար տեսակներ, ներառյալ միջերկրածովային, իրանական, կովկասյան և դրիմյան ծագում ունեցողները:

Տարածաշրջանին բնորոշ էնդեմիկ կենդանատեսակներից և թռչնատեսակներից են՝ Մեծաչք ճպուռ (*Lestes macrostigma*), Սևծովյան ճպուռ (*Libellula pontica* Selys), Վարդագույն հավալուսն (*Pelecanus onocrotalus* Linnaeus), Փոքր ձկնկուլ (*Phalacrocorax pygmaeus* Pallas), Ճչան կարապ (*Cygnus cygnus*), (Գիշանգղ *Neophron percnopterus* Linnaeus), Օձակեր արծիվ (*Circaetus gallicus*), Տափաստանային մկնաճուռակ (*Circus macrourus*), Տափաստանային արծիվ (*Aquila nipalensis orientalis* Hodgson), Կրկնակցար (*Gallinago medi*), Ներկարար (*Coracias garrulus*), Սպիտակափող սոխակ (*Irania gutturalis*), Կոցար կաճաղակ (*Haematopus ostralegus* Linnaeus), Փոքր ձկնկուլ - (*Phalacrocorax pygmaeus* Pallas) այլն:

Նկար 10.



Փոքր ձկնկուլ - *Phalacrocorax pygmaeus* Pallas



Ներկարար - *Coracias garrulus*

Կենդանատեսակային կազմից կարևորվում է նաև աղուտային հալոֆիլ համակեցությունների հետ է կապված էնդեմիկ տեսակի՝ Արարատյան որդանի (*Porphiophora hamelii*) գոյությունը, որը զարգանում է որդանախոտի (*Aeluropus littoralis*) արմատների վրա:



Նկար 11. Արարատյան որդան (*Porphiophora hamelii*)

Մասիս տարածաշրջանում կենդանիներից տարածված են սողունները, կրծողները, շատ են թռչնատեսակները:

Դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների և բուսատեսակների հանդիպելը գրեթե բացառվում է:

8.7 Պատմամշակութային և բնության հուշարձաններ

Մարզը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով և տեսարժան վայրերով՝ Արտաշատ, Դվին, Խոր Վիրապ, Կաքավաբերդ, Հովհաննես-Կարապետ, Ստեփանոս, Վիշապաքարեր:

Համաձայն ՀՀ Կառավարության 2007թ. մարտի 15-ի «Հայաստանի հանրապետության Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա Պատմության և Մշակույթի անշարժ հուշարձանների» N 385-Ն որոշման հավելված 4-ի՝ Արգավանդ բնակավայրի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում ներառված է 3 հուշարձան):

2.18 ԱՐԳԱՎԱՆԴ գյուղ

Աղյուսակ 5

1	2	3	4	5	6	7	8
1			ԴԱՄԲԱՐԱՆ	1413 թ.	գյուղի մեջ	<	1
2			ԵԿԵՂԵՑԻ	4-5 դդ.	գյուղի առե եզրին	<	2
	2.1		Գերեզմանոց	4-20 դդ.		<	2.1
3			ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1976 թ.	գյուղի մեջ	S	4

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն՝ Արարատի մարզում առկա են հետևյալ բնության հուշարձանները:

Աղյուսակ 6.

	Երկրաբանական	
1	«Անձավիկ» քարանձավ	Արարատի մարզ, Վեդի քաղաքից մոտ 20 կմ հս-արլ, Ուխտուակունք գետի աջ ափին, Դարբանդ գետի հետ միախառնման տեղից 08 կմ հոսանքով վեր, 40 մ գետի հունից բարձր, ծ.մ-ից 2100 մ բարձրության վրա
2	«Դաշտաքար» քարանձավ	Արարատի մարզ, Դաշտաքար գյուղից 02 կմ հվ, Անահավատքար լեռան հս լանջին, հիմքից 400 մ բարձրության վրա

3	«Մեծ հոր» անձավային համակարգ	Արարատի մարզ, Շաղափ գյուղից 3 կմ հս-արլ, ծ.մ-ից 2200 մ բարձրության վրա
4	«Անանուն» շերտավոր նստվածքներ	Արարատի մարզ, Տիգրանաշեն-Պարույր Սևակ գյուղերի ճանապարհի 17-րդ կմ-ի վրա
5	«Անանուն» անտիկլինալ ծալք	Արարատի մարզ, Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
6	. «Անանուն» ծալքավոր ստրուկտուրա	Արարատի մարզ, Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
7	«Անանուն» ծալքագոյացման մերկացում	Արարատի մարզ, Ուրցաձոր գյուղից 4,5 կմ դեպի հս, Վեդի գետի աջ ափին
8	«Հորթունի» բրածո ֆլորա	Արարատի մարզ, Զանգակատուն գյուղից 8 կմ հս-արլ
9	«Ջերմանիսի» բրածո ֆլորա	Արարատի մարզ, Ուրցաձոր գյուղից մոտ 20 կմ գետի հոսանքով վեր, նախկին Ջերմանիս գյուղատեղիի մոտակայքում
10	«Վեդի գետի ավազանի» բրածո ֆաունա	Արարատի մարզ, Վեդի գետի ավազան, Ուրցաձոր գյուղից 15 կմ հս-արլ
	Կենսաբանական հուշարձան	
1	«Աղակալած ճահճուտ»	Արարատի մարզ, քաղ. Արարատ, հանքային աղբյուրների մոտ, ծ.մ-ից մոտ 850 մ բարձրության վրա

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքում բնության, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ չեն հայտնաբերվել: Նախագծի իրականացումը համաձայն ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատողի կողմից տրված եզրակացության հնագիտական և պատմա-մշակութային առումով ռիսկեր չունի: Հավելված 8:

8.8 Հատուկ պահպանվող տարածքներ

Արարատի մարզում են գտնվում բնության հատուկ պահպանվող տարածքներ՝ «Խոսրովի անտառ» պետական արգելոցը, «Գոռավանի ավազուտներ», «Խոսրովիրապ», «Գիլան» արգելավայրերը և 11 բնության հուշարձան:

Խոսրովի արգելոցը կազմավորվել է 1958 թ. Հարավային Հայաստանի բնական համալիրների պահպանման համար: Գտնվում է Գեղամա լեռնաշղթայի հարավային լեռնաձյուղի Գառնիի և Վեդի գետերի ավազանում: Մակերեսը 29126 հա է, որից անտառայինը՝ 9446 հա: Ռելիեֆը լեռնային է (բարձրությունը ծովի մակերևույթից 16003400 մ է) կտրտված է բազմաթիվ կիրճերով: Արգելոցի սահմաններում աճում են բարձրակարգ բույսերի 1849 տեսակ (Հայաստանի բուսականության տեսակային կազմի 60%-ը, որոնցից 146-ը գրանցված են «Կարմիր գրքում»: Կան հազվագյուտ և էնդեմիկ տեսակներ (24), օրինակ՝

հայկական ալոճենին, Վավիլոնյան աշորան (տարեկան) և այլն: Արգելոցի տարածքում հանդիպում են 1500 անողնաշարավոր և 283 ողնաշարավոր կենդանիներ, որոնցից համապատասխանաբար 31-ը և 34-ը գրանցված են ՀՀ կենդանիների Կարմիր գրքում: 50-ը գրանցված են «կարմիր գրքում»: Թռչնաֆաունան մոտ 130 տեսակ է. դրանց թվում են քարակազավը, սև անգղը, գառնանգղը, կարմրաթև մագլցողը և այլն: Կաթնասուններից կա 55 տեսակ, սողուններից՝ 30, երկկենցաղների 4 և ձկների 9 տեսակ:

Խոսրովի անտառ» պետական արգելոցը /ծովի մակերևույթից 1600-2300մ բարձրության վրա/, որը հիմնել է Արշակունի Խոսրով Բ Կոտակ թագավորը՝ 330-338թթ-ին: Խոսրովի արգելոցի տարացքում կան հայկական ճարտարապետության բազմաթիվ հուշարձաններ, պատմական կառույցների փլատակներ:

«Գոռավանի ավազուտներ» արգելավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում, զբաղեցնում է Արարատյան գոգավորության նախալեռնային թեք հարթությունները, Վեդի քաղաքի հարավային մասը՝ Գոռավան գյուղի մոտ, Վեդի գետի միջին հոսանքի ձախափնյա տարածքները, ծովի մակերևույթից 1100-1200 մետր բարձրության վրա. «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրի հատուկ պահպանության օբյեկտներն ավազային անապատին յուրահատուկ կենդանական աշխարհն ու ավազասեր բուսականությունն են:

«Խոր Վիրապ» արգելավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում, Արարատի հարթավայրում. Խոր վիրապ եկեղեցական համալիրի հարևանությամբ, Արտաշատ հնագույն քաղաքի մոտ, ծովի մակերևույթից 815.8-887 մետր բարձրության վրա: «Խոր Վիրապ» պետական արգելավայրի հատուկ պահպանության օբյեկտները մերձարաքսյան խոնավ տարածքի էկոհամակարգի յուրահատուկ կենդանական աշխարհն ու ջրաձահձային բուսականությունն են:

«Գիլան» արգելավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում, Գեղամա լեռնաշղթայի հարավային լանջերին, ծովի մակերևույթից 1330-1400 մետր բարձրության վրա:

Մարզում հատուկ պահպանվող տարածքները կազմում է ընդհանուր հողատարածքի 13,8%-ը:

Նախատեսվող գործունեության ենթակա և հարակից տարածքում բացակայում են հատուկ պահպանվող տարածքները:

8.9 Սոցիալ-տնտեսական

ՀՀ Արարատի մարզի բնակչությունը կազմում է 258,2 հազ. մարդ, ՀՀ բնակչության 8,7%-ը: Բնակչությունը հիմնականում միատարր է, ապրում են նաև ռուսներ, քրդեր, ասորիներ: Բնակելի տարածքները հիմնականում տեղակայված են հարթավայրային գոտում: Մարզի ամենախոշոր քաղաքը Արտաշատն է, որը գտնվում է Երևան-Գորիս-Ստեփանակերտ ավտոմայրուղու վրա Երևան քաղաքից 10կմ հեռավորության վրա: Մարզն ունի զարգացած տնտեսություն, առավել հայտնի է որպես ծանր արդյունաբերության կենտրոն, այստեղ են գտնվում ցեմենտի գործարանը և ոսկու կորզման ֆաբրիկան, առկա են 103 արտադրական ձեռնարկություններ, շինարարական կազմակերպություններ, 112 հանրակրթական դպրոցներ, մանկապարտեզներ, համայնքային ենթակայության երաժշտական, արվեստի և

գեղարվեստի դպրոցներ, մշակույթի տներ, 1 պետական դրամատիկական թատրոն, 2 տուն-թանգարան, 4 բժշկական կենտրոններ, 1 ծննդատուն, 1 առողջության կենտրոն, բուժամբուլատորիաներ: Առաջատար տեղ է զբաղեցնում ձկնարդյունաբերությունը, առկա է 157 ձկնաբուծական տնտեսություն: Հարուստ է օգտակար հանածոներով՝ տրավերտինի, կավերի, կրաքարի, ավազի, ավազակոպճային խառնուրդի, օնիքսանման մարմարների, մարմարացված կրաքարերի, բազալտի, միկրոբրեկչիանների հանքավայրերով: Մետաղական հանածոների արդյունաբերական պաշարներ մարզում առկա չեն: Մարզի գյուղատնտեսության կարևոր ճյուղերից է անասնապահությունը: Արտաշատը զարգացած է գինու, մրգի պահածոների, հախճապակու, խեցեգործական իրերի արտադրության ուղղությամբ: Մասիսին և Վեդուն բնորոշ են սննդի և թեթև արդյունաբերության ճյուղերը: Մասիսը նաև խոշոր երկաթուղային ապրանքային կայարան է, որն ունի միջմարզային նշանակություն:

Մարզն հարուստ է տեսարժան վայրերով՝ Արտաշատ, Դվին, Խոր Վիրապ, Կաքավաբերդ, Հովհաննես-Կարապետ, Ստեփանոս, Վիշապաքարեր: Ունի հարուստ բնաաշխարհ՝ Արարատ, Գեղամա լեռներ, Խոսրովի անտառ:

Համաձայն վիճակագրության ծառայության տվյալների՝ 2021թ.-ին Արարատի մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

➤ արդյունաբերություն	10.7 %,
➤ գյուղատնտեսություն	15.1 %,
➤ շինարարություն	7.7 %,
➤ մանրածախ առևտուր	4.2 %,
➤ ծառայություններ	1.5 %:

Մարզն ապահովված է բջջային հեռախոսակապով և շարժական ինտերնետ կապով:

Համաձայն Արարատի համայնքապետարանի կայք էջի/ararat.mtad.am/general/՝ մարզի ընդհանուր տարածքը կազմում է 2090,0քկմ, ՀՀ տարածքի մոտ 7%-ը, բնակչությունը կազմում է 258,2 հազ. մարդ:

Մասիս ավանը 1995թ. հուլիսի 11-ի՝ «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» օրենքով ստացել է քաղաքի կարգավիճակ: Համաձայն 2022-2026թթ. Մասիս համայնքի զարգացման ծրագրի՝ Մասիս բազմաբնկավայր համայնքը կազմավորվել է 2021թ. դեկտեմբերի 5-ին՝ Արարատի մարզում կայացած ՏԻՄ ընտրությունների արդյունքում: ՀՀ Արարատի մարզի Մասիս խոշորացված համայնքն իր մեջ ներառում է՝ ք. Մասիս, Ագատաշեն, Այնթապ, Արբաթ, Արգավանդ, Արևաբույր, Գեղանիստ, Գետափնյա, Դաշտավան, Դարակերտ, Դարբնիկ, Զորակ, Խաչփար, Հայանիստ, Հովտաշատ, Դուկասավան, Մարմարաշեն, Նիզամի, Նոր Խարբերդ, Նոր Կյուրին, Նորաբաց, Նորամարգ, Ջրահովիտ, Ռանչպար, Սայաթ Նովա, Սիս, Սիփանիկ (թվով 27 բնակավայր):

Համաձայն Մասիս համայնքի էլեկտրոնային էջի՝ Մասիս քաղաքը գտնվում է Արարատյան դաշտի կենտրոնական մասում՝ Հրազդան գետի ստորին հոսանքի ձախ ափին՝ Արարատի մարզի հյուսիսում: Հյուսիսից սահմանակից է Արարատի մարզի Այնթապ, Նոր Խարբերդ, արևմուտքից՝ Սայաթ-Նովա, հարավից՝ Նորամարգ, արևելքից՝ Մարմարաշեն, Նոր Կյուրին համայնքներին, Հյուսիսից և արևելքից՝ Երևան քաղաքին, Հյուսիս-արևմուտքից՝ Արմավիրի մարզի Փարաքար և Վաղարշապատ համայնքներին: Համայնքի վարչական տարածքը կազմում է 16929,083 հա, 2022թ. հունվարի 1-ի դրությամբ մշտական բնակչությունը

կազմում է 92623 մարդ, որի 97,7%-ը հայեր են, մնացածը՝ ռուսներ և եզդիներ: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 9807,97հա: Ծովի մակարդակից գտնվում է 830 մ բարձրության վրա: Հեռավորությունը մայրաքաղաքից կազմում է 17կմ, մարզկենտրոն Արտաշատից՝ 20կմ դեպի արևմուտք, պետական սահմանից ուղիղ գծով՝ 8կմ: Համայնքը գազիֆիկացված է, առկա են բոլոր ենթակառուցվածքները, համայնքի տարածքով են անցնում միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհները: Մասիս համայնքում աստկա են 33, հանրակրթական դպրոցներ, 26 նախադպրոցական հիմնարկներ, մշակութային տներ կամ ակումբներ, 1 հիվանդանոց, պոլիկլինիկաներ, բժշկական կենտրոններ, առևտրի, հասարակական և սպասարկաման ոլորտի օբյեկտներ: Քաղաքում է գտնվում Ժամանցային մարզահամալիրը, լողավազաններ: Համայնքի տարածքում գործում են դիզելային շարժիչների վերանորոգման, գորգագործության, տրիկոտաժի և վարագույրների, տարաներ արտադրող, ծխախոտի, գինու և կոնյակի, պահածոների, փայտամշակման գործարաններ, նավթամթերքի բազան, ֆինանսական հաստատությունների մասնաճյուղեր և այլն: Ունենալով նպաստավոր բնակլիմայական պայմաններ, աշխարհագրական դիրք(խոշոր երկաթուղային ապրանքային կայարան է), ռոռգման ցանցի առկայություն, համայնքում զարգացած է գյուղատնտեսությունը, որի առաջատար ճյուղերն են բանջարաբուծությունը, պտղաբուծությունը, հացազգիների մշակումը և անասնապահությունը: Համայնքում առաջընթաց է ապրում ինտենսիվ այգիների, ջերմոցային, սառնարանային տնտեսությունների զարգացումը, ավելանում է ֆոտովոլտային արևակայանների թիվը:

Համայնքի որոշ բնակավայրեր հայտնի են իրենց հնավայրերով, մասնավորապես Հայանիստ բնակավայրի տարածքում՝ մ.թ.ա. 3-րդ հազարամյակի «Ոսկե բլուր» բնակատեղին, Արգավանդ բնակավայրի տարածքում՝ 5-6-րդ դարերում Սուրբ Հարություն եկեղեցու, հին գերեզմանոցի տարածքում՝ 4-5-րդ դարերի Թուխ Մանուկ եկեղեցու ավերակները, 15-րդ դարի թուրքմենական ամիրաների դամբարանը և այլն:

Մասիս քաղաքն ունի երկու նորակառույց եկեղեցի, Սբ. Թադեոս և Սբ. Գևորգ եկեղեցիները: Նշված հնավայրերի առկայությունը բարենպաստ պայմաններ են ստեղծում զբոսաշրջության զարգացման համար:

Համայնքի տարածքով է հոսում Հրազդան գետը, հարավում՝ պետական սահմանի երկարությամբ՝ Արաքս գետը: Համայնքում բացակայում են անտառային տարածքները:

Միս բնակավայրը գտնվում է Հրազդան գետի աջ ափին՝ միջինարաքսյան գոգավորությունում՝ ծովի մակարդակից 828մ բարձրության վրա: Մարզկենտրոնից գտնվում է 26 կմ հեռավորության վրա: Բնակավայրը զբաղեցնում է 8,2 կմ² կլիման չոր, բարեխառն ցամաքային է, օդի միջին ամսական ջերմաստիճանը բկազմում է 24-26⁰: Մթնոլորտային տարեկան տեղումները կազմում է 250-300մմ: Բնական լանդշաֆտները կիսանապատներ են, որոնք ռոռգման ընթացքում վեր են ածվել կուլտուր-ռոռգելի լանդշաֆտների: Համաձայն Վիճակագրության կայք էջի՝ 2022թ. հուլիսի 1-ի դրությամբ մշտական բնակչությունը կազմում է 1515 մարդ:

Գյուղ ունի դպրոց, գրադարան, մանկապարտեզ, բուժկետ, կապի հանգույց: Գյուղն արդյունաբերական ուղղությամբ զարգացվածություն չունի, տնտեսության հիմնական ուղղությունը գյուղատնտեսությունն է: Բնակչությունն հիմնականում զբաղվում է դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ, մշակում են ջերմասեր բանջարաբոստանային,

հացահատիկային, կերային կուլտուրաներ: Բնակչությունը զբաղվում է նաև կաթնատու անասնապահությամբ, թռչնաբուծությամբ, ձկնաբուծությամբ:

Մարզի և համայնքի բնապահպանական և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներից է՝ մաքրման կայանների բացակայությունը, թափոնների տարերայնորեն տեղադրումը, անկանոն աղբահանությունը, հողերի դեգրադացիայի կանխումը, աղակալած հողատարածքների վերականգնումը, կենսաբազմազանության պահպանումը, կանաչ տարածքների բացակայությունը, գործազրկության բարձր մակարդակը, նոր աշխատատեղերի բացումը, ենթակառուցվածքների, ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի, ոռոգման ջրի, ճանապարհների բարելավումը, աղքատության շեմի նվազումը և այլն:

9. Նախատեսվող գործունեության բնութագիրը և տեխնիկական-տեխնոլոգիական լուծումները

Շինությունը նախատեսվում է իրականացնել Արարատի մարզ, Մասիս համայնքի Միս բնակավայրի Ձկնաբույծների փողոց 29 հասցեում: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 2,08 հա է: Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ընկերության սեփական տարածքում, որտեղ առկա է պահեստային շինություն 552,5մ² մակերեսով:

9.1 Շինարարության և շահագործման փուլեր:

Կառուցապատման տեխնիկա-տնտեսական ցուցանիշները.

1. Հողամասի ընդհանուր մակերեսը՝ 2,08 հա (100%):
2. Կառուցապատման մակերեսը հողի վրա՝ 3989.4մ²(19.2%):
3. Անջրանցիկ մակերես՝ 9214.2մ²(44.3%):
4. Կանաչապատման մակերեսը՝ 7446.4 մ²(35.8%):
5. Մնացած 150մ² –ը լինելու է ազատ տարածք(0.9%), ինչը հնարավոր է օգտագործվի հաջորդ փուլերում:

Նախատեսվում է 2. 08 հա մակերեսի վրա կառուցել հետևյալ արտադրական մասնաշենքեր և ավտոկայանատեղի.

- կերի արտադրամաս-1885,94մ²,
- ձկան վերամշակման արտադրամաս-1469,02մ²,
- վարչական շենք 166.18մ²:
- Ավտոկայանատեղի 20 մեքենաների համար՝ 468,26մ² մակերեսով:

9.1.1 Արտադրամասեր.

Ձկան վերամշակման արտադրամաս, իրենից ներկայացնում է ուղղանկյուն հատակագծով շինություն, շենքի ամենաբարձր նիշը կազմում է 7,0մ:

Ձկնամթերքի արտադրամասում արտադրվելու է շուրջ 32 տեսակի արտադրանք՝ ֆիլե, պահածոներ, սթեյքեր՝ սառեցրած և պաղեցրած այլ ձկնամթերք: Ձկնամթերքի

արտադրության ընթացքում նախատեսվում է օրական վերամշակել 30 տոննա ձկնամթերք, որից ստացվելու է օրական շուրջ 20-27 տոննա պատրաստի ձկնամթերք և օրական 3.6 տոննա ձկան թափոն, ամսական կտրվածքով ստացվելու է 108 տոննա թափոն, որը օգտագործվելու է կերի արտադրամասում որպես հումք:

Հիմնական օգտագործվող կոմպոնենտներն են պրոտեին, ձկան յուղ, մանրաթելեր ցելյուլոզային, Ֆոսֆոր, վիտամին A, D3, E:

Հումքը. ձկնամթերքի արտադրության համար ձուկը/հումք/ բերվելու սեփական ձկնաբուծարաններից՝ օրական 30տ քանակով: Հումքը մատակարարվելու է կենդանի կամ թարմ և սառեցրած վիճակում: Ստացված ձկնամթերքը անցնելու է անհրաժեշտ կահավորված հոսքագծով, որի ընթացքում ձուկը անցնելու է մի շարք պրոցեսներով՝ լվացում, փորոտիքի հեռացում, չորացում, ֆիլեավորում, փաթեթավորում: Փաթեթավորումը կատարվելու է վակուումով կամ համապատասխան ստանդարտներով արտադրված սառույցով արկղերի մեջ:

Պլանավորվում է վերամշակել ընդհանուր շրջանառության 10 տոկոս ներմուծված արտադրանք, իսկ մնացածը ստանալ տեղական հումքից:

Նախատեսվում է ձկան արտադրամասի հետևյալ տեխնիկական փուլերը.

1. Հումքի մթերում 0-4 աստիճանի պայմաններում՝ հումքի որակական հատկանիշները պահպանելու համար,

2. Ստացված ձկնային հումքի նախնական վերամշակում՝ հիմնականում փորոտիքի հեռացում և այլ տարրերից ձկան լվացում

3. Ձկան գլխի, պոչի և այլ ավելորդ մասերի հեռացում, լվացում

4. Ստացված առաջնային հումքի որակական հատկանիշների ստուգում՝ ձկան մսի տեսք, գույն, քաշ և այլն,

5. Թիթեղյա տարաների ստերիլիզացում տաք գոլորշիով կամ ստերիլիզատորի միջոցով,

6. Կտրտում և տեղավորում թիթեղյա տարաների մեջ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում այլ համեմունքների ավելացում,

7. Տարաների տեղավորում ավտոկլավի մեջ և եռման պրոցեսի սկիզբ,

8. 120 աստիճանի տակ 30 րոպե պահում՝ մանրէազերծման և մսի որակական հատկանիշների պահպանման համար,

9. Ավտոկլավի անջատում և սառեցման պրոցեսի սկիզբ

10. Ստացված պահածոների դուրս բերում ավտոկլավից և արտադրանքի պահեստավորում:

Պրեսերվների հիմնական տեխնոլոգիական փուլերը.

1. Հումքի մթերում 0-4 աստիճանի պայմաններում՝ հումքի որակական հատկանիշները պահպանելու համար,

2. Ստացված ձկնային հումքի նախնական վերամշակում՝ հիմնականում փորոտիքի հեռացում և այլ տարրերից ձկան լվացում

3. Ձկան գլխի, պոչի և այլ ավելորդ մասերի հեռացում, լվացում

4. Ստացված առաջնային հումքի որակական հատկանիշների ստուգում՝ ձկան մսի տեսք, գույն, քաշ և այլն,

5. Ստացված հումքի հետագա մշակում՝ փշերի հեռացում և այլ տարրերի հեռացում

6. Ֆիլեավորում

7. Ֆիլեների աղադրում կամ մարինացում՝ համապատասխան համեմունքների և տարրերի ավելացմամբ

8. Վաակումային փաթեթավորում կամ փրփրապլաստե տարաների մեջ տեղավորում՝ 0-4 սառնարանային պահեստում պահպանելու համար:

Կերի արտադրամասն իրենից ներկայացնում է ուղղանկյուն հատակագծով 1885,94մ² մակերեսով շինություն՝ 11,06մ ամենաբարձր նիշով:

Կերի արտադրամասը հազեցած է լինելու լիովին ավտոմատ սարքերով՝ եվրոպական սարքերով՝ եվրոպական ստանդարտներին համապատասխան: Կերի արտադրամասում նախատեսվում է մշակման ենթարկել մոտ 3 տոննա/ժամ հումք (օրական 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով):

Հումք. սկզբնական փուլում Կերի արտադրամասի հումքն ապահովելու է սեփական ձկնամթերքի արտադրամասից՝ փորոտիքը և այլ մասեր: Հետագայում՝ մնացած այլ անհրաժեշտ հումքը հավաքվելու է այլ ձկան սպանդանոցներից, որոնք կհամապատասխանեն ընկերության կողմից սահմանված չափանիշներին: Հումքի ստացումից հետո կատարվելու են հետևյալ տեխնոլոգիական փուլերը՝ հումքի եփում, ստացված մասսայից ձկան յուղի և ձկան այլուրի ստացում, չորացում, համապատասխան տարաներում ձկան յուղի և ձկան այլուրի պահեստավորում: Ստացված ձկան այլուրից նախատեսվում է ստանալ տարբեր կենդանիների համար՝ ձուկ, խոզ, տավար, հավ, ինչպես նաև շների և կատուների համար կերեր:


Տեխնոլոգիական գործընթացը գաղտնի գործընթացք է և Ձեռնարկողն ավելի մանրամասն ներկայացվել չի կարող:

Վարչական շենք. Նախատեսվող վարչական շենքը լինելու է երկհարկանի է՝ 730մ բարձրությամբ, 166,18մ² մակերեսով: Շենքի հիմքերը լինելու են ժապավենային խամքարբետոնից, ուժեղացված հիմնային հեծաններով, ծածկարանի հիմքը կետային ե/բ: Պատերը կազմված են լինելու 20սմ հաստությամբ, խարամաբետոնե բլոկներից, հորիզոնական ամրանավորմամբ, ե/բ կառուցվածքների հետ կապված են խարսխաձողերով: Հատակները՝ հախճասալ, լամինատ: Ծածկը՝ երկաթբետոնե միաձույլ, թեթև մետաղական տեղամասերով: Ներքին հարդարման համար օգտագործվելու են գաջ, ծեփամածիկ, լատեքսային ներկ, սանհանգույցում հախճասալ: Արտաքին հարդարումը լինելու է այլուկաբոնդ: Վարչական շենք ունենալու է հարթ տանիք՝ երկթեք ծածկարանի համար՝ պրոֆիլավոր ցինկապատ թիթեղի ծածկույթով, կազմակերպված ջրահեռացմամբ:

Գոյություն ունեցող պահեստն իրենից ներկայացնում է ուղղանկյուն հատակագծով 552,5մ² մ շինություն, շենքի ամենաբարձր նիշը կազմում է 6,80մ:

Յուրաքանչյուր արտադրամասի տարածքում լինելու են պահեստային տարածքներ, որոնք կահավորված են լինելու անհրաժեշտ սառնարանային խցիկներով՝ տարբեր ջերմային ռեժիմներ ապահովելու համար: Պահեստային տարածքներում լինելու են շոկային սառեցման, խորը սառեցման և պաղեցման խցիկներով սառնարաններ:

Կերի պահպանության համար նույնպես լինելու են համապատասխան ջերմային ռեժիմ ունեցող պահեստային տարածքներ, որտեղ պահեստավորվելու են ստացված ձկան այլուրը և կերերը:



9.1.2 Գազամատակարարում. Միս բնակավայրի վարչական տարածքը գազիֆիկացված չէ: Արտադրամատում գազամատակարարում չի նախատեսվում:

9.1.3 Ջերմամատակարարում. Արտադրամատում գազի օգտագործում չի նախատեսվում, ուստի արտադրամասի ջերմամատակարարումը նախատեսված է տաք ջրամատակարարման և ջեռուցման էլեկտրական անհատական տաքացուցիչներով:

9.1.4 Էլեկտրամատակարարում Համաձայն Էլեկտրամատակարարման տեխնիկական պայմանի արտադրամասի մասնաշենքերի Էլեկտրամատակարարումը իրականացվում է տարածքում առկա 0,4 կվ գլխավոր բաշխիչ վահանից, 0,4 ԿՎ լարման ստորգետնյա մալուխային գծերով: Համաձայն նախագծային առաջադրանքի մալուխները խրամուղում

անցկացվում են պոլիէթիլային խողովակով: Մալուխների անցկացումը խրամուղով նախատեսված է համաձայն A-92 տիպային նախագծի:

9.1.5 Ջրամատակարարում- տարածքում բացակայում են ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը: Ջրամատակարարման համակարգը միանալու է Միս վարչական բնակավայրում գտնվող ինքացայտվող ջրհորին համաձայն՝ Արարատի մարզի Միս բնակավայրի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի: Հավելված 4

Միաժամանակ Շրջակա միջավայրի նախարարության կողմից դրական փորձաքննական եզրակացություն ստանալուց հետո, նախարարություն կներկայացվի ջրօգտագործման թույլտվության ստացման հայտ՝ 2023թ. օգոստոսի 3-ի N 1332-Ն որոշմամբ սահմանված կարգով: Համապատասխան թույլտվության ստացումից հետո կկատարվի հորատանցքի կահավորում, ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքի տեղադրում՝ հիմք ընդունելով, որ 2022 թվականի հուլիսի 7-ին ընդունված «Հայաստանի հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-316-Ն ՀՀ օրենքի պահանջները:

Միս համայնքում նախատեսվող արտադրամասի ջրամատակարարման արտաքին ցանցերի նախագիծը կատարված է նախագծման առաջադրանքի, գործող ՇՆուԿ 2,04,01,85, 478-80 հիման վրա: Նախատեսված է ջրամատակարարումն իրականացնելու համար նախագծել ջրագիծ ϕ 63 տրամագծով, որի սնուցումն իրականացնել գոյություն ունեցող ջրագծից: Միացման կետում նախատեսվում է տեղադրել դիտահոր ϕ 1500: Ջրապահանջն ապահովելու նպատակով տարածքում նախատեսվում է տեղադրել ջրի բաք 50տ տարողությամբ: Ջրագծի արտաքին ցանցի մոնտաժը իրականացվում է ϕ 75-32 տրամագծի պոլիէթիլենե խողովակներով: Ջրի համակարգերի մոնտաժը կատարվելու է համապատասխան աշխատանքի արտադրության գործող նորմերի և կանոնների ՇՆուԿ 3.5.01-85:

9.1.6 Տնտեսական և կենցաղային կոյուղի- շահագործման փուլում կենցաղային կոյուղաջրերի մաքրման համար տեղադրվելու է 120մ³ տարողության սեպտիկ եռախուց հոր, որի պատերը մեկուսացված է հիդրոմածիկով: Կեղտաջրերը 50սմ խճավազային գտող շերտից անցնելով մաքրված հոսքաջրերն ինքնահոս հեռացվում է բնահողի մեջ և ներծծվում: Կոշտ զանգվածը տեղափոխվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Կոյուղու ներքին ցանցի անցկացնելու համար նախատեսվում է խրամուղու փորում, ավազից հիմնատակի կառուցում/ հաստ-100մմ/, կոյուղու խողովակների տեղադրում /D300,D200/ 540զձմ:

9.1.7 Հեղեղատար կոյուղի- Իրականացվելու է պոլիմերային ծալքավոր խողովակներով՝ D300մմ: Նախատեսվում է ներքին հեղեղատար համակարգի անցկացում ջրընդունիչներով և դիտահորերով: Ջրընդունիչները նախատեսվում է դիտահորին միացնել 200 մմ տրամագծով խողովակներով, իսկ համակարգը նախատեսվում է իրականացնել 300 մմ խողովակներով: Ընդհանուր հեղեղատար համակարգի երկարությունը կազմում է 441 գծամետր, որը նախատեսվում է միացնել տարածքին կից գոյություն ունեցող հեղեղատար առվակին, որտեղ հավաքվում են ճանապարհներից և տարածքից գոյացող անձրևաջրերը:

9.1.8 Ավտոկայանատեղի. Տարածքի ներսում նախատեսվում է առանձին ավտոկայանատեղի՝ 7-10 բեռնատարների համար, իսկ տարածքին կից 20 ավտոկայանատեղի՝ աշխատակիցների համար, ընդհանուրը 830մ2:

9.1.9 Ճանապարհ – նախատեսվում է մինչև գոյություն ունեցող ասֆալտապատ ճանապարհ արտադրամասից կառուցել 101,9զձմ երկարության, 1450մ2 մակերեսով ավտոճանապարհ:

Գոյություն ունեցող հիմնատակի վրա լցվելու է խոշորաբեկոր լեռնային քարային խառնուրդ, այնուհետև լցվելու է խոշորահատիկ խիճ, արվելու է 150մմ հաստությամբ նախաշերտ, վերնի շերտը ծածկվելու է տաք խոշորահատիկ և տաք մանրահատիկ ասֆալտով: Կառուցվելու է նաև մայթեր և կողնակներ, անցկացվելու է հեղեղատարի մետաղական խողովակ ϕ -520x10, 12.0գմ:

9.1.10. Հենապատի կառուցում – նախատեսվում է հենապատի հիմքերի բետոնացում հենապատի տակ՝ 17,4 մ3, հենապատի կառուցում// Բետոն B-7.5, հաստ. 40,0սմ, H= 80,0սմ/ 12.5 մ3 , հենապատի երևացող մասերի սվաղ՝ 43,2 մ2, հենապատի երևացող մասերի ներկում՝ 43,2 մ2:

Նախատեսվում է հետևյալ աշխատանքները.

- Հիմքերը կետային հիմքեր ե/բ հիմնային հեծաններից՝ բետոնե նախապատրաստական շերտի վրա 10 սմ հաստ:
- Պատերը սենդվիչ պանելներից /հաստությունը 80մմ/:
- Ծածկը՝ մետաղական խողովակներից:
- Տանիքը՝ երկթեք մետաղական ֆերմաներով:
- Հատակը՝ բետոնե, կերամիկական և պրեսգրանիտե սալիկավոր հատակ:
- Պատուհանները և դռները՝ այլումինե վիտրաժներ, մետաղապլաստե, այլումինե Եվրոստան տիպի դռներ:
- Ներքին հարդարումը՝ գաջե սվաղ, ներկել լատեքսային ներկերով, սանհանգույցներում և լոգարանում ց/ավազային:
- Սվաղ՝ կերամիկական սալիկներով երեսպատում:
- Ցոկոլ՝ երեսպատել բազալտե սալիկներով /հաստ 3սմ/:
- Միջնորմները՝ գիպսասովարաթղթե, մետաղական հիմնակմախքով ջրամեկուսացմամբ:

9.1.11. Օդափոխություն. Արտադրամասի օդափոխությունը և ծխահեռացումը կատարվելու է ամբողջ տարածքում՝ բոլոր արտադրամասերում: Օդափոխությունը և ծխահեռացումը կատարվելու է բնական օդատարներով: Նախատեսվում է տեղադրել գործարանային արտադրության օդափոխության համակարգեր, որոնք կատարելու են գործարանի ներքին միջավայրի ֆիլտրում, ինչպես նաև դուրս եկող օդի հոսքի մաքրում:

9.1.12. Հրդեհանվտանգություն. արտադրամասն ապահովված է լինելու ձայնամեկուսացման, ջերմամեկուսացման, օդափոխության և ավտոմատ հրդեհային ազդարարման համակարգերով՝ ծխի և ջերմային ազդանշանային ընդունող-հսկիչ սարքերով, լուսաձայնային-ազդանշանային ազդասարքերով: Արտադրամասերում նախատեսվում է տեղադրել հրդեհաշիջման համակարգեր՝ ծանուցման համակարգով, իսկ արտադրամասերից դուրս տեղադրվելու են հիդրանտներ՝ համապատասխան կահավորումով:

Շենքերն ապահովված են լինելու էվակուացիոն ելքերով և սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով:

Արտադրական շենքերի հակահրդեհային պաշտպանությունը կազմակերպվելու է համաձայն՝ ՀՀՇՆII-8.04.-2005 «Շենքերի և շինությունների հրդեհային ավտոմատիկա» շինարարական նորմերի, «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի» կողմից տրված հրահանգների, ինչպես նաև

փոշեհատիկային հրդեհաշիջման մոդուլների տեխնիկական անձնագրերի հիման վրա:

Արտադրամասի ջեռուցումը նախատեսված է անհատական էլեկտրամատակարարման տաքացուցիչների միջոցով:

Նախագիծը մշակելիս հաշվի են առնվել ինչպես դիտարկվող տարածքի հատակագծի երկրաչափական ուրվագիծը, դիտարկվող և հարակից տարածքների գոյություն ունեցող կառուցապատումը, տեղանքի ռելիեֆային առանձնահատկություններն, այնպես էլ պատվիրատուի պահանջները:

Շահագործման փուլում արտադրական տարածքն ապահովված է լինելու բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով, որոնց լուծումները նախատեսվել են քաղաքաշինության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N 253-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

9.1.13. Ցանկապատում. Արտադրամասի տարածքը ցանկապատվելու է 2 մետր բարձրության, 608 գծամետր երկարության KII-25 տեսակի ցինկապատ գունավոր ալիքավոր թիթեղով:

9.1.14. Աղբահեռացում. Շահագործման փուլում աղբահեռացման նպատակով տեղադրվելու են 6 հատ 1*1,5 չափերի աղբամաններ, ներառյալ տեսակավորման աղբամանները: Աղբահանությունը կատարվելու է ընկերության սեփական բեռնատար մեքենաներով՝ համայնքապետարանի հետ կնքված պայմանագրի հիման վրա: Տեղադրվելու են նաև տեսակավորման աղբամաններ:

9.2 Շինարարության իրականացում.

Շինարարության ընթացքում տրանսպորտային մոտեցումները՝ մուտքն ու ելքն ապահովվում նախագծով նախատեսված արտաքին փողոցից, որը միանում է միջհամայնքային նշանակության ճանապարհին:

9.2.1 Քանդման աշխատանքներ. Տարածքում շինությունների քանդման աշխատանքներ չի նախատեսվում, կատարվելու են միայն հողային աշխատանքներ:

9.2.2 Շինարարական հրապարակ. շինարարական աշխատանքների իրականացման համար նախատեսվող շինարարական հրապարակ է ամբողջ տարածքը, որից շին. հրապարակը կազմելու է 20600մ²:

Շինարարության փուլում նախատեսվում է հետևյալ շինարարական աշխատանքները.

- հողային աշխատանքներ և հիմքերի իրականացում,
- հիմնակմախքի իրականացում
- ծածկերի և տանիքի իրականացումներ,
- արտաքին և ներքին ինժեներական կոմունիկացիաների իրականացում,
- արտաքին պատերի երեսապատում և հարդարման աշխատանքներ,
- ներքին հարդարման աշխարտանքներ:

Շինարարական հրապարակում լինելու են ժամանակավոր տաղավարներ, որտեղ տեղակայվելու են.


- գրասենյակ 1 հատ
- շինարարական նյութերի, գործիքների պահեստավորման հատված
- հանդերձարան 1 հատ
- բիոզուգարան 3 հատ


- աղբի տարաներ 4 հատ
- պահակակետ 1 հատ
- անցակետ 2 հատ
- լուսարձակներ
- հակահրդեհային վահանակ
- մեքենաների անիվների լվացման հարթակ՝ 1 հատ 8,0x3,5 մ չափերի:

Շինհրապարակում նախատեսված է շինարարական աղբի պահման տարածքը:

Գծապակեր 5

Շինհրապարակի կազմակերպման հատակագիծը





Շինհրապարակը ցանկապատվելու է 2 մետր բարձրության, 608 գծամետր երկարության ԿՊ-25 տեսակի ցինկապատ գունավոր ալիքավոր թիթեղով:

Շինարարության ժամանակ նախատեսվող ժամանակավոր պահեստներն, ինչպես նաև աշխատողների համար նախատեսվող ճաշարանը, հանդերձարանը, զրասենյակը, պահակատունը տեղադրվելու են տարածքում՝ ժամանակավոր վագոն տնակներում:

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում՝ 1հատ 8,0x3,5 մ չափերի լվացման սարքի միջոցով: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման սարքի միջով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ: Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած, ինչպես նաև շինարարական հոսքաջրերը միավորվելու են մեկ բակային՝ ջրահեռացման ցանցով և լցվելու են բիոզուգարաններ: Անձրևաջրերից առաջացող հոսքաջրերը պլաստմասսե վերգետնյա խողովակներով, բակային սելավային ջրացանցի միջոցով հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող 1,1մ3 չափերի պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի շինարարական աշխատանքների ժամանակ շին. հրապարակի ջրցանման և անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Շինհրապարակը ցանկապատվելու է ժամանակավոր մետաղական պատնեշով, դարպասով: Պատնեշի արտաքին մասում տեղադրվելու է տեղեկատվական պաստառ: Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ:

Բոլոր տիպի շին-մոնտաժային աշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինհրապարակն ապահովվելու է էլեկտրականությամբ, պահպանվելու են անվտանգության և հակահրդեհային պայմանները:

Ելնելով առկա պայմաններից շինարարության փուլում նախատեսվում են անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ, հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների հետ:

9.2.3 Հողային աշխատանքներ. նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսվում է իրականացնել ընդհանուր 6095,4մ³ ծավալի հողային աշխատանքներ, որից 5444մ³ հողային զանգվածը կատարվելու է հետլիցք, 178,4մ³ օգտագործվելու է հարթեցման և բարեկարգման համար, իսկ 473մ³ հողային գրունտը տեղափոխվելու է համայնքի հետ համաձայնեցված վայր:

Հողային և հիմնային, տանիքի, հատակների հարդարման, ինչպես նաև լրող և պատող կոնստրուկցիաների շին մոնտաժային աշխատանքները կատարվելու են համաձայն աշխատանքային նախագծի՝ ՇՆուԿ 3.02.02.-87-ի և ՇՆուԿIII-4-81-ի պահանջներին համապատասխան:

Հողային և հիմնային, տանիքի, հատակների հարդարման, ինչպես նաև լրող և պատող կոնստրուկցիաների շին մոնտաժային աշխատանքները կատարվելու են համաձայն աշխատանքային նախագծի՝ ՇՆուԿ 3.02.02.-87-ի և ՇՆուԿIII-4-81-ի պահանջներին համապատասխան:

9.2.4 Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, շինարարական աշխատանքներ. գործունեության կատարման շինարարության փուլում օգտագործվող հիմնական տեխնիկա-տրանսպորտային միջոցներն են.

- Էքսկավատոր -1 հատ
- Բուլդոզեր – 1հատ
- Ավտովերամբարձ կռունկ-1հատ
- Ավտոբետոնախառնիչ-2հատ
- Ինքաթափ ավտոմոբիլ- 1 հատ
- Էլ. եռակցող սարք-1 հատ
- Շարժական կոմպրեսոր
- Ձեռքի մեխանիկական գործիքներ

Շինարարական աշխատանքների՝ բեռնման-բեռնաթափման ժամանակ օգտագործվող բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբոնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին՝ համաձայն ՇՆ և Կ III-4-80* պահանջներին: Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա 50 -ից ոչ ավել թեքություն:

Շինտեխնիկական լինելու է Կապալառու ընկերության սեփական տեխնիկական կամ

անհրաժեշտության դեպքում վարձակալվելու են այլ կազմակերպություններից: Մեքենաներն աշխատելու են ըստ հերթականության և ըստ անհրաժեշտության: Աշխատող մեքենաները կայանվելու են գործունեության տարածքում՝ շինհրապարակում: Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է ավագի կամ մանրախճի փոում՝ վառելիքի կամ քսայողերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով: Աղտոտված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Կառուցապատման բոլոր լուծումների համար հաշվի են առնվելու տեղանքի պայմանները, կազմակերպվելու է անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր միջոցառումներ՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

Ամբողջ շինարարության ընթացքում վերահսկվելու են շինարարության որակի չափանիշները՝ տեխնիկական վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից: Ակտավորվելու են թաքնված աշխատանքները, գրանցելով վարման մատյանում:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ՝ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների հետ:

9.2.5 Էլեկտրամատակարարում. տարածքում բացակայում է էլեկտրամատակարարման համակարգը: Շինարարության ընթացքում էլեկտրամատակարարումը կատարվելու է համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի:

9.2.6 Հրդեհաշիջման համակարգ. շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվելու են «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին»-ի կողմից տրված հրահանգներով:

Շինարարական հրապարակում տեղադրվելու է հրդեհաշիջման վահանակ՝ դարպասների մոտ, յուրաքանչյուրի վրա հակահրդեհային կրակմարիչներով և հիդրատներով: Շինարարության փուլում տեղադրվելու է նաև 50 տոննա տարողության ջրի բաք՝ հրդեհամարման, ջրցանի նպատակով:

9.2.7 Աղբահեռացում. շինարարության ընթացքում առաջանալու են շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով՝ մոտ 18մ³ ծավալով: Շինաղբի կուտակումը կատարվելու է շինհրապարակում նախատեսված վայրում՝ պարկերի մեջ, չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը:

Կենցաղային աղբը կառուցապատման փուլում կազմվելու է 2400կգ/տարի: Կենցաղային աղբի կուտակման համար տեղադրվելու են 1.5*2 չափերի 2 աղբարկղ:

Շինարարության փուլում աղբահեռացումը կարգավորվելու է ընկերության սեփական բեռնատարների միջոցով՝ Մասիսի համայնքապետարանի կողմից համաձայնեցված՝ Ձկնաբույծների փողոցի սկզբնամասում գտնվող փոսի մեջ:

9.2.8 Ժամանակացույց

Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կազմելու է 24 ամիս կամ 2 տարի:

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՍՆԻՊ 1.04.03-85* մաս II հիման վրա, հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ԱՄԻՍՆԵՐ				
		3 ԱՄԻՍ	8 ԱՄԻՍ	3 ԱՄԻՍ	5 ԱՄԻՍ	5 ԱՄԻՍ
1	ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՎ ՀԻՄՔԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ					
2	ՀԻՄՆԱԿՄԱԽՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ					
3	ԾԱԾԿԻ ԵՎ ՏԱՆԻՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ					
4	ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԻՆՃԵՆԵՐԱԿԱՆ ԿՈՍՏՈՒՆԻԿԱՑԻԱՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ					
5	ԱՐՏԱՔԻՆ ՊԱՏԵՐԻ ԵՐԵՍԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ					
6	ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ					

9.2.9 Բարեկարգում. Կանաչապատում. Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել:

Կանաչապատում. շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է 7446,4մ² մակերեսով կանաչապատում: Նախատեսվում ծառերի տնկում՝ թվով 50 հատ, թփերի տնկում՝ 150 հատ, խոտի ցանք՝ ձեռքով 6800 մ²:

Կանաչապատումը կատարվելու է Մասիսի համայնքապետարանի կողմից համաձայնեցված կանաչապատման նախագծին համապատասխան:

10. Օգտագործվող բնատեսություններ և նյութեր

Արտադրամասի կառուցման շինարարության և շահագործման փուլերում բնատեսություններից օգտագործվելու է ջուր՝ խմելու-կենցաղային նպատակով:

10.1 Շինարարության փուլ.

10.1.1 Ջուր. շինարարության փուլում ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, տնտեսա-կենցաղային կարիքների, տարածքի ջրցանի, հողի(գրունտի) խոնավացման և անհրաժեշտության դեպքում հրդեհաշիջման համար:

Շինարարության փուլում աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի:

Ջրցանի համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով, համապատասխան լիցենզիա ունեցող անձանց կամ ընկերությունների կողմից: Ջուրը լցվելու են տարածքում տեղադրվող 10 տ տարողության բաքի մեջ: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի/շինհրապարակի և ճանապարհների/ և անիվների լվացման համար:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W\ddot{E}.i. = (n \times N + n1 \times N1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 5 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n1– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 15 մարդ

N1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 620օր:

$$W_{\text{խ.տ.}} = (5 \times 0.016 + 15 \times 0.025) \times 620 = 282,1 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0,455 \text{ մ}^3/\text{օր:}$$

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U1 = S1 \times K1 \times T, \text{ որտեղ՝}$$

S1 – ջրվող տարածքի մակերեսը կազմում է 21000մ² (շինհրապարակ, արտաքին ճանապարհներ)

K1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 120 օր (առավելագույնը 120 օր, ներառված կրկնակի ջրցանը)

$$U1 = 21000 \times 0.0015 \times 120 = 3780 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 33,1 \text{ մ}^3/\text{օր:}$$

Ընդամենը ջրի սպառումը շինարարության փուլում կլինի 4062.1մ³/շին. ժամ:

Անիվների լվացման համար Շինարարության փուլում մեքենաների լվացումը նախատեսվում է օրը 2-3 հատ՝ 1 անգամ հաճախականությամբ:

Տեղադրվելու են 1 հատ լվացման կետ, յուրաքանչյուրի ջրաքանակի նորման ընդունված է 0,8լ/վրկ:

$$Q_2 = 0.8 \times 3 = 2.4 \text{ և/վրկ}$$

Կեղտաջրեր. շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող սանհանգույցներից՝ ժամանակավոր տեղադրվող 1,5*2 չափերի 3 հատ բիոզուգարաններից: Շինաշխատանքների ավարտից դրանք ապամոնտաժվելու են:

10.1.2 Նյութեր. Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, մասնավորապես.

- երկաթբետոն, երկաթբետոնե կարկասներ, խարսխաձողեր
- գաջ, ծեփամածիկ
- սենդվիչ պանելներ
- խարամբետոնե բլոկներ
- մետաղ, մետաղական կառուցվածքներ
- ամրանային ձողեր
- բարձրորակ երեսապատման սալիկներ
- ցինկապատ թիթեղ
- բարձրորակ սալիկներ, ներկեր և այլն:

Կառույցի երեսապատումը նախատեսվում է իրականացնել սենդվիչ-պանելներով մետաղական հիմնակմախքի վրա: Հիմնախարիսխը նախատեսվում է երեսապատել բազալտե սալիկներով՝ 3 սմ հաստությամբ:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույցի տեղադրում և բետոնախնուրդի պատրաստում չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով: Միաձույլ ե/բ կոնստրուկցիաների բետոնալցման համար համապատասխան դասի բետոնը պատվիրվելու է մասնագիտացված բետոնային հանգույցներում: Բետոնը շինհրապարակում լցվելու է կաղապարների մեջ բետոնամղիչով:

Շինաշխատանքերը կատարվելու են մասնագիտացված կապալառու կազմակերպությունների կողմից: Շինարարության համար նախատեսված բոլոր նյութերն, ինչպես նաև շենքի արտաքին և ներքին հարդարման նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված (լիցենզավորված) կազմակերպություններից՝ շինինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր շինարարական կազմակերպության արտադրական բազայից:

Ձմռանը ներքին հարդարման և բետոնային աշխատանքները կատարվելու են հատուկ տաքացման պայմաններում:

Արտադրական հրապարակում շինանյութերը պահեստավորվելու են պահեստներում, իսկ բաց տարածքի դեպքում կտեղադրվեն տակդիրների վրա՝ չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը: Սորուն նյութերը պահեստավորվելու են ծածկի տակ:

10.2 Շահագործման փուլ. տարածքում բացակայում է ջրամատակարարման համակարգը, ուստի շահագործման փուլում արտադրամասի ջրամատակարարումը կատարվելու է

Համայնքին պատկանող Նոր թաղամաս 1-ում գտնվող գոյություն ունեցող ինքնաշատրվանող ջրհորից համաձայն՝ Արարատի մարզի Միս վարչական ղեկավարի կողմից տրված տեղեկանքի:

Շահագործման փուլում օգտագործվող ջրի քանակները կազմում են.

- տնտեսական կարիքների համար՝ 4մ³,
- ձկնամթերքի վերմշակման արտադրամաս՝ 12մ³/օր,
- կերի արտադրամաս՝ 10մ³:

Օգտագործվելու է ընդամենը՝ 26մ³ ջուր, որի մեջ ներառված է նաև սարքավորումների լվացման համար նախատեսված ջրաքանակը: Արտադրական հոսքագծերը կահավորված են ավտոմատ լվացման համակարգով:

Կեղտաջրեր. տարածքում բացակայում է կեղտաջրերի հեռացման համակարգերը: Կեղտաջրերի հեռացման համար է նախատեսվում է 4,7մ խորության վրա տեղադրել 6,6մx 8,3մx2,25մ չափերի և 120մ³ հզորության եռախուց սեպտիկ հոր: Սեպտիկ հորի մաքրման օրական հզորությունը կազմում է 28մ³/օր: Հեռացվող կեղտաջրերի PH կպահպանվի 6,5-9,0 սահմաններում:

Սեպտիկ հորում կուտակված ջրային զանգվածը ֆիլտրվում է բնական ավազակույձային շերտով և ներծծվում է բնահողի մեջ, իսկ հավաքված կոշտ զանգվածը հանվում է և հատուկ մեքենաների միջոցով տեղափոխվելու է աղբավայր:

Շահագործման փուլում հրդեհաշիջման համար պահանջվող ջրի ելքը հաշվարկվել է համաձայն «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ.40-01.01-2014 նորմերի:

Նյութեր. Շահագործման փուլում տարաների ախտահանումը կատարվելու է սողայի և կրի միջոցով՝ 3 տ/տարի քանակով, որոնց օգտագործումից թափոններ չեն առաջանալու՝ լուծվելու են ջրի մեջ:

11. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և վնասակար ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը

Գործունեության իրականացման ենթակա տարածքը գտնվում է Արարատի մարզի Մասիս համայնքի Միս բնակավայրի՝ Ձկնաբույժների փողոց 29 հասցեում: Նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կառաջանան շինարարության փուլում, կապված՝ հողային աշխատանքների, մեքենաների և շինտեխնիկայի շահագործումից առաջացող ծխագազերի արտանետումների, շինտեխնիկայի շահագործման և ավտոտրանսպորտի տեղաշարժի արդյունքում աղմուկի մակարդակի ավելացման, թափոնների կառավարման, բետոնային աշխատանքների հետ, որոնք կլինեն կարճաժամկետ:

Գործունեության իրականացումը չի առաջացնի լանդշաֆտի ծանրաբեռնվածություն, քանի որ գործունեությունն իրականացվելու է ընկերության արտադրական տարածքում:

«Ինվեստ Պլյուս» ՍՊԸ-ի կողմից արտադրական շենքի կառուցումը կատարվելու է ՀՀ գործող շինարարական նորմերին և պահանջներին համապատասխան, մասնավորապես ՀՀՇՆ 30.01-2014թ. «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական վայրերի հատակագծում և կառուցապատում», «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն», ՀՀՇՆ 11-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն»:

Գնահատման հայտի շրջանակներում կատարվել է գործունեությանն առնչվող գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային պայմանների ուսումնասիրություն, նախատեսվել է նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում հնարավոր բնապահպանական և սոցիալական վնասակար ազդեցությունների կանխատեսումը և դրանց կանխարգելմանը, նվազեցմանը կամ բացառմանն ուղղված ազգային և միջազգային ստանդարտներին համապատասխան մեղմման ուղղված միջոցառումներ, դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմները:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները հիմնականում կապված են.

- օդային ավազանի՝ պայմանավորված շինտեխնիկայի աշխատանքի արդյունքում օդային ավազան արտանետումների, հողային աշխատանքների հետ,
- հողային, ջրային ռեսուրսների օգտագործման,
- լանդշատի փոփոխությունների, կենսաբազմազանության,
- արտակարգ իրավիճակների առաջացման,
- թափոնների կառավարման,
- շինարարության ընթացքում մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ:

Շինարարության փուլ.

11.1. Օդային ավազան.

Գործունեության իրականացման շինարարության փուլում լինելու են օդային ավազան արտանետումներ՝ տրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում ծխազագերի և հողային աշխատանքների (փորման, հարթեցման) ընթացքում, ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով:

Գործունեության իրականացման ընթացքում օդային ավազանի հնարավոր աղտոտվածությունը լինելու է կարճաժամկետ և թույլատրելի նորմերի սահմաններում: Շինարարության ընթացքում, հատկապես չոր և շոգ եղանակներին, կատարվելու են շինհրապարակի և ճանապարհների փոշենստեցման աշխատանքներ՝ ջրցան մեքենայով: Շինարարության փուլում հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում Կապալառուի կողմից կիրականացվի օդի աղտոտվածության գործիքային չափումներ:

Օդային ավազան արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում՝ գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան,
- շինհրապարակը կցանկապատվի, մեքենաները շին. հրապարակ մտնելու և դուրս են

գալու մաքուր վիճակում,

- գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակել անջրթափանց թաղանթով,

- շինհրապարակում սորուն նյութերը պահել ժամանակավոր պահեստներում կամ ժամանակավոր ծածկի տակ կամ ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,

- բացառել տարածքում թափոնների բաց այրումը,

- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում,

- բացառել անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:

Նշված միջոցառումների իրականացման արդյունքում օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի նախատեսվում:

Շահագործման փուլ. շահագործման փուլում օդային ավազանի վրա հնարավոր ազդեցություն չի նախատեսվում, օդային ավազան արտանետումներ չեն կանխատեսվում, քանի որ ձկնամթերքի արտադրության տեխնոլոգիական գործընթացում գազ կամ այլ տեսակի վառելիքի օգտագործում չի նախատեսվում: Արտադրական գործընթացում քիմիական նյութերի օգտագործում չի նախատեսվում:

11.2 Հողային ռեսուրսներ.

Գործունեության ենթակա տարածքի հողի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ գյուղատնտեսական կամ արտադրական օբյեկտների:

Համաձայն կատարված ուսումնասիրությունների արդյունքների՝ տարածքում բացակայում է հողաբուսաշերտը, առկա հողային շերտը շագանակագույն կավեր են:

Համաձայն նախագծային լուծումների՝ նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսվում է 6095.4մ³ ծավալի հողային աշխատանքներ: Հողային զանգվածն առաջանալու է արտադրամասերի՝ 2575մ³, պահեստի՝ 600մ³, էլեկտրամատակարարման համակարգի անցկացման՝ 156,4մ³, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի՝ 2104մ³ կառուցման, սեպտիկ հորի տեղադրման՝ 660մ³ նախատեսվող աշխատանքներից:

Հողային զանգվածից հետլիցք՝ 5444 մ³ –ը կատարվելու է հետլիցք, 178,4 մ³ հողային զանգվածն օգտագործվելու է տեղում հատակի լիցքի և հարթեցման համար, իսկ 473 մ³-ը տեղափոխվելու է աղբավայր՝ համայնքապետարանի հետ համաձայնեցված վայր:

Հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու համար նախատեսվում է.

- հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում, առանձնացված վայրում՝ ծածկված

անջրթափանց պոլիէթիլէնային թաղանթով,

- շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով,

- շինհրապարակն ապահովված է կլինի արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար,

- շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,

- նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը,

- ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով,

- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կկատարվի տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,

- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է ավագ կամ մանրախիճ,

- մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում, փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր, այն փոխարինելով նորով,

- մեքենաների անիվների լվացումը կատարել անիվների լվացման հարթակում,

- բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարել մինչև վերջիններիս շինհրապարակից դուրս գալը:

Շահագործման փուլում արտադրական տարածքը ասֆալտապատվելու է՝ հողային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցությունից խուսափելու նպատակով:

Բացառվելու է թափոնների կուտակումը բաց տարածքում՝ հողային ծածկույթի վրա:

Գործունեությունն իրականացվելու է փակ արտադրական տարածքում, ուստի ազդեցություններ հողային ռեսուրսների վրա չի կանխատեսվում:

11.3 Ջրային ռեսուրսներ.

Համաձայն «Հայր և որդի Տիտիզյաններ» ՍՊԸ կողմից տրված ինժեներաերկրաբանական եզրակացության՝ նախատեսվող գործունեության տարածքն աղքատ է գրունտային ջրերից: Գրունտային ջրերն ըստ ֆոնդային տվյալների գտնվում են 4.0մ-ից խորը հորզոններում:

Կառուցապատվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Գործունեության տարածքին մոտ ջրային ռեսուրսը Հրազդան գետն, որը գործունեության տարածքից գտնվում է 1533,9մ հեռավորության վրա: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի հնարավոր արտահոսքերը և արտանետումները ջրային ռեսուրսներ:

Ուստի մակերևութային և գրունտային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի

կանխատեսվում:

Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու նպատակով նախատեսվում է.

- փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,

- անձրևաջրերը և արտադրական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող պարզարան՝ 1,1 մ³ չափերի:

- ջրցանման համար կօգտագործվի միայն տեխնիկական որակի ջուր և պարզարանում կուտակված ջուրը,

-տեխնիկական ջուրը բերվելու է մասնագիտացված և լիցենզիա ունեցող անձանց կամ ընկերությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Վերջիններիս հետ պայմանագրերը կկնքվեն շինարարական աշխատանքների սկսման փուլում,

- պարզարանում մեխանիկական նստեցման հետևանքով առաջացած տիղմը՝ որպես շինադր, ժամանակ առ ժամանակ կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,

- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կետերում,

- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով,

-բետոնանյութի լցվածությունն ապահովել այնպես, որպեսի բետոնանյութը տեղափոխման ժամանակ չթափվի ճանապարհներին՝ երթեկությանը չխոչընդոտելու և ասֆալտածածկը չվնասելու համար:

Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվում է.

Շինարարության փուլում կեղտաջրերի հեռացման համար նախատեսվում է.

- շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են սանհանգույցից կամ ժամանակավոր տեղադրվող 3 հատ բիոզուգարաններից՝ 1,5*2 մ չափերի:
- Բիոզուգարանների մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:
- Շին.աշխատանքների ավարտից դրանք ապամոնտաժվելու են՝ կապալառուի կողմից:

Շահագործման փուլ.

Արտադրամասի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը պետք է համապատասխանեն 2.04.01-85 «Շենքերի ներքին ջրամատակարարում և կոյուղի», 2.04.02-84 «Ջրամատակարարում: Արտաքին ցանցեր և կառույցներ», ՄՆԻՊ-ների պահանջներին:

Շահագործման փուլում գործունեությունն իրականացվելու է փակ՝ ցանկապատված

տարածքում: Միաժամանակ կեղտաջրերի մաքրման համար տեղադրվելու սեպտիկ հոր: Նախատեսվում է տեղադրել 6,6մx8,3մ x 2,25մ չափերի 120մ³ տարողության եռախուց սեպտիկ հոր, որի մաքրման հզորությունը կազմելու է 28մ³/օր: Հոսքաջրերն ավազային համապատասխան հաստության խճավազի շերտով, 50մ երկարություն անցնելուց հետո ֆիլտրվում, մաքրվելու են և հեռացվելու են դեպի հողային շերտ: Հորի եռախուց համակարգի առաջին խցում հավաքվում են կոշտ նստվածքները, մնացած խցերը ֆիլտրում են ավելցուկային հեղուկ զանգվածը մեխանիկական նստվածքային ձևով: Առաջացող նստվածքի ծավալը կազմում է տարեկան 400 մ³:

Ջրային ռեսուրսների խնայողաբար օգտագործելու նպատակով անհրաժեշտ է պահպանել ՀՀ կառավարության 2019թ. հունվարի 17-ի «ՋՐԱԽՆԱՅՈՂ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՑ ԲԽՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 39-Լ որոշման V գլխի պահանջները: Միաժամանակ անհրաժեշտ է պահպանել 2022 թվականի հուլիսի 7-ին ընդունված «Հայաստանի հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-316-Ն ՀՀ օրենքի, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022թվականի հուլիսի 8-ի N16-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 40-01.03-2022 «Կոյուղի արտաքին ցանցեր և կառուցվածքներ» շինարարական նորմերի պահանջները:

- Կատարել ջրօգտագործողի կողմից տվյալների առցանց փոխանցում:
- Նախատեսված խորքային հորի համապատասխան կահավորում, ջրահաշվիչ(ջրաչափիչ) սարքի տեղադրում:
- Արտադրությունում տարրաների լվացումից, հոսքազծերի ախտահանումից առաջացած հոսքաջրերն ուղղորդվելու են դեպի սեպտիկ հոր:
- Կոյուղու կոլեկտոր թափվող հոսքաջրերի որակական հատկանիշները պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվային պահանջներին,
- Հեռացվող կեղտաջրերի խառնուրդի ակտիվ ռեակցիան(рН) կպահպանվի 6.5-9.0 սահմաններում, ինչպես նաև կախյալ նյութերի և այլ խառնուրդների պարունակությունները, կեղտաջրերի ջերմաստիճանը չպետք է գերազանցի 40°C:
- Սեպտիկ հորի մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ մոտ 6 ամիսը մեկ պարբերականությամբ:

11.4 Կենսաբազմազանություն.

Գործունեությունն իրականացվելու է ձեռնարկողի սեփական տարածքում:

Գործունեության տարածքը գտնվում է կիսանապատային լանդշաֆտային գոտում, գուրկ է բուսածածկից:

Բուսական աշխարհ. Գործունեության ենթակա տարածքում բացակայում է անտառային ծածկը, տեղ-տեղ առկա է խոտածածկ: Այն գտնվում է մարդկային ազդեցության գոտում, ուստի բացակայում են ՀՀ Կարմիր գրքի բուսատեսակները:

Կենդանական աշխարհ. գործունեության հարակից տարածքներն արդեն կառուցապատված են, ուստի մարդկային գործոնի, երթևեկության՝ մեքենաների շարժի, աղմուկի պայմաններում տարածքում բացակայում են ՀՀ կարմիր գրքում գրանցված

կենդատեսակները, ինչպես նաև կենդանիների բնադրավայրերը, միգրացիոն ուղիները:

Շինարարության և շահագործման փուլերում կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում, քանի որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ՄԻս բնակավայրի վարչական տարածքում՝ ընկերության սեփական տարածքում, որտեղ ակտիվ է մարդկային գործունը:

11.5 Թափոններ.

Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ.

- շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով (ավազի, բետոնի, քարի և այլն), (վտանգավորության դաս IV դաս, ծածկագիր՝ 91200601 01 00 4)՝ 18 մ³ ծավալով:
- կոշտ կենցաղային թափոններ՝ աղբ (ծածկագիր՝ 91200400 01 00 4) կառուցապատման փուլում՝ 4800կգ/տարի, շահագործման փուլում՝ 21600 կգ/տարի:
- «Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող» (ծածկագիրը՝ 31401100 08 99 5)՝ 473մ³ ծավալով:

Շինարարության փուլում առաջանալու են նաև տարատեսակ թափոններ, մասնավորապես՝

- յուղոտված լաթեր(58200600 01 01 4)-0,5մ³,
- յուղերով աղտոտված ավազ(յուղի պարունակությունը - 15%-ից ցածր՝ (31402303 01 03 4)- 3մ³,
- ներկեր, կարծրավցած սոսինձ (55700600 01 01 4), մոտ՝ 0,5 մ³,
- մետաղական ջարդոնի մնացորդներ, մոտ՝ 4մ³ :

Այս կարգի թափոնները համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N430-Ն հրամանի՝ ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի՝ պատկանում են վտանգավորության 4 դասին:

Կենցաղային աղբի հաշվարկները

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տ

n – աշխատողների թիվն է

$$M=20*120= 2400 \text{ կգ/տ}$$

Շինարարությունը տևելու է 2 տարի, հետևաբար

$$M=2400*2= 4800 \text{ կգ/տ}$$

Շահագործման փուլում կենցաղային աղբի առավելագույն ծավալը հաշվարկվել է հաշվի առնելով արտադրամասի առավելագույն ծանրաբեռնվածությունը՝ 60 մարդ ներառյալ վարչական աշխատողները: Շահագործման փուլում կենցաղային աղբի ծավալը կկազմի.

$$M=60*360= 21600\text{կգ/տարի}$$

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ պահել թափոնների կուտակումներից,

- շին հրապարակի տարածքում կհստակեցվի շին. աղբի նախնական կուտակման վայրը,

- շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,

- մետաղական մասերը կառանձնացվեն և որպես մետաղի ջարդոն կհանձնվեն հատուկ մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- կառուցապատման փուլում կենցաղային աղբը կուտակվելու է 2 հատ $1,5 \times 2 \text{մ}^3$ չափերի պլաստմասե աղբահավաք տարողությունների մեջ,

- կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության ընկերության սեփական բեռնատարների միջոցով,

- յուղոտված լաթերը 1/10 հարաբերակցությամբ կխառնվեն կենցաղային աղբին և կտեղափոխվեն կենցաղային աղբավայր կամ կհանձնվեն մասնագիտական կազմակերպություններին,

- շինաղբի, տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով կամ բեռնատարները ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,

- բացառել աղբի կուտակումը շիհրապարակից դուրս՝ այլ տարածքներում,

- շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական նյութերի մնացորդները, վտանգավոր նյութերը հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:

Շահագործման փուլ. կապված գործունեության բնույթից՝ ձկնամթերքի վերամշակման, կերերի արտադրության հետ, առաջանալու են թափոններ: Թափոնների տեսակային կազմը տրված է համաձայն՝ Շրջակա միջավայրի նախարարի 22.07..2022թ. «Ձկնարդյունաբերության թափոնների կառավարման ուղեցույցը հաստատաւելու մասին» N⁰ 262-Լ հրամանի:

- «Պահածոյացված և սառեցված մթերքի մնացորդներ» ձկնային մնացորդներ(ծածկագիրը՝11135100 13 00 4)-**3,5տ/օր:** Առաջանում է ձկան

առաջնային մշակման ընթացքում՝ գլուխ, պոչ, լողակներ, թեփուկներ, ոսկորներ, կաշի, լորձ. արյուն, ներքին օրգաններ, այդ թվում՝ փորատիք:

- «Փչացած, աղտոտված կամ չմշակված սննդամթերք», (ծածկագիրը՝ 11720400 13 01 4)՝ 0,005տ/օր: Առաջանում է արտադրական գործընթացում՝ ձկան մարմնի մասեր:
- «Ձկան վերամշակման թափոններ» (ծածկագիրը՝ 13500300 00 00 5)՝ 0,095տ/օր քանակով: Առաջանում է արտադրական գործընթացում՝ ձկան մարմնի մասեր: Այս թափոնները տեղափոխվելու են կերի արտադրամաս և օգտագործվելու է որպես հումք:
- Փրփրապլաստե, պենոպլաստե արկղեր (խոտանված տարաներ, ծածկագիրը՝ 57101200 01 00 5)- յուրաքանչյուրը մոտ 500կգ/ տարի:
- Փաթեթավորման մնացորդներ՝ թուղթ(ծակագիրը՝ 18790100 01 00 4, կազմված է թղթե, ստվարաթղթի մնացորդներից)՝ մոտ 500 կգ/տարի:
- Ջրի պարզեցման շլամներ/մաքրման ֆիլտրեր/(ծածկագիրը՝ 94300100 04 00 4) մոտ 1,0 տ/ տարի:
- կենցաղային թափոններ(ծածկագիր՝ 91200400 01 00 4, կազմված է սննդային մնացորդներից, թղթից, ստվարաթղթից)՝ մոտ 21,600կգ/տ և այլն:

Այս կարգի թափոնները համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N430-Ն և 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն հրամանների՝ ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի՝ պատկանում են վտանգավորության 4 և 5-րդ դասերին:

Թափոնների ոչընչացման եղանակ կարող է հանդիսանալ դրանց այրումը համապատասխան լիցենզիա ունեցող ընկերություններում կամ թաղումը՝ «Թափոնների մասին» օրենքով նախատեսված հատուկ հատկացված վայրերում: Այս եղանակը հնարավոր է մեծ վնաս հասցնի շրջակա միջավայրին՝ աղտոտելով մակերևութային ջրային և հողային ռեսուրսները: Սակայն ընկերությունը նախատեսում է ձկնամթերքի արտադրության ընթացքում առաջացող ձկնային մնացորդների թափոններն օգտագործել որպես երկրորդային հումք՝ ձկների համար կեր ստանալու նպատակով, որը կնպաստի շրջակա միջավայրի բարելավմանը:

Արտադրական գործընթացում՝ դեղամիջոցների և էկոլոգիական աղտոտիչներ չեն օգտագործվելու:

Թափոնների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա մեղմելու կամ բացառելու նպատակով նախատեսվում է.

- թափոնների հավաքումը, պահումը, տեղափոխումը, օգտագործումն իրականացնել ՀՀ կառավարության կողմից հաստատված՝ վտանգավոր թափոնների պահման, հավաքման, տեղափոխման, վերամշակման համապատասխան նորմերի, սահմանված չափորոշիչներին համապատասխան,

- թափոնները տեսակավորվելու են ըստ թափոնատեսակի, կուտակվելու են առանձին տարաներում, պահվելու են առանձին փակ պահեստային տարածքում՝ մինչև օգտագործումը կամ տեղափոխումը:

- ձկնային մնացորդները հավաքվելու են առանձին տարաներում, պահպանվում են սառեցվող խցերում և ենթարկվելու են երկրորդային, երրորդային վերամշակման՝ կեր ստանալու նպատակով,

- բացառվելու է ձկան թափոնների պահումը բաց տարածքում՝ արևի ուղիղ ճառագայթների տակ, պահվելու է հատուկ հերմետիկ փակվող տարաներում, սառը և չոր, լավ օդափոխվող տարածքում,

- ձկան թափոնները պահել հատուկ մակնշված, կափարիչով ամուր փակվող տարաներում,

- խոտանված տարաները հանձնվելու են վտանգավոր թափոնների պահման, հավաքման, տեղափոխման, վերամշակման համապատասխան լիցենզիա ունեցող մասնագիտական ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- ջրի ֆիլտրերը կենցաղային աղբի հետ տեղափոխվելու են աղբավայր,

- տարաները և տարածքն ախտահանվում և լվանում են անհրաժեշտ քանակության չեզոքացման միջոցներով՝ կիր, սոդա և տաք գոլորշով,

- թղթի թափոնները հանձնվում են թղթի վերամշակման ձեռնարկություններին,

- թափոնների հետ առնչվող աշխատողներին ապահովվել հատուկ պաշտպանիչ արտահագուստով՝ ձեռնոցներ, ակնոցներ, երկարաձիտ կոշիկներ և այլն:

Արտադրության տեխնոլոգիական ցիկլում օգտագործվող ֆիլտրերը պարբերաբար փոխվում են: Ֆիլտրերի փոփոխման հաճախականությունը կապված է նրանց ստուգման արդյունքներից: Ֆիլտրերը քիմիական մաքրման չեն ենթարկվում:

Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր է առաջանան նաև թափոններ՝ մետաղական մասերի տեսքով, կապված տարբեր սարքավորումների փչանալու կամ վերանորոգման հետ: Այն մետաղյա մասերը, որոնք ենթակա չեն վերանորոգման՝ հանձնել համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին:

Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել 6 հատ 1,5x2մ³ տարողության պլաստմասե աղբամաններ, ինչպես նաև տեսակավորման աղբամաններ:

11.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Գործունեության ենթակա և մոտակա տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ունեցող պատմամշակութային և բնության հուշարձանները, բնության հատուկ պահպանվող տարածքները, արգելավայրերը:

Ուստի հնարավոր ազդեցություններ վերջիններիս վրա չի նախատեսվում:

Միաժամանակ շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմինն (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

11.7 Աղմուկ և թրթռում.

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում եվ բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմեր N2-III-11.3 հաստատելու մասին N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերը հաստատելու եվ հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- պահպանել աղմուկի, վիբրացիայի թույլատրելի նորմերը,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում,
- շինարարական աշխատանքներում ներգրավվել ժամանակակից՝ աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,
- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում,
- պարբերաբար կստուգվեն և կկարգաբերվեն տրանսպորտային միջոցների շարժիչները,
- բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը շինհրապարակից դուրս՝ բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,
- օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

Շահագործման փուլում աղմուկի մակարդակը կապված է լինելու արտադրամասում սարքավորումների աշխատանքի հետ:

- բացառել աշխատատեղերում սարքավորումներից աղմուկի մակարդակի 80դԲ (A) և ավելի գերազանցումը,
- գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն),

- արտադրական տարածքում աղմուկի մակարդակի պարբերաբար չափագրումներ,
- հոսքագծերի սարքին վիճակում պահպանում, վերահսկում:

11.8 Արտակարգ իրավիճակներ.

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների ռիսկերի առաջացում՝ կապված.

- հրդեհների առաջացման, բնական աղետների (երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ և այլն) և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների փոփոխության (քամու ուժեղացում, փոթորիկ),
- հեղուկ նյութերի արտահոսքի և շահագործվող շինտեխնիկայի ,
- աշխատանքի ընթացքում հնարավոր վթարային իրավիճակների առաջացման հետ:

Արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը կանխարգելու համար կառուցապատումը պետք է կատարել, ելնելով «Արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի գնահատման ապահովման նպատակով, քաղաքաշինական համալիրի՝ սեյսմիկ պաշտպանության բնագավառի կարևոր նշանակություն ունեցող, ինչպես նաև Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված գործող նորմերով սահմանված երկրաշարժադիմացկունության հիմնական սկզբունքների՝ համապատասխան պարտադիր պահանջներից:

Համաձայն «Հայր և որդի Տիտիզյաններ» ՍՊԸ կողմից տրված ինժեներաերկրաբանական եզրակացության՝ վտանգավոր երևույթներն ինչպիսիք են՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի վրա բացակայում են:

Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ազդեցությունները մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- շենքի հիմքերի փոստրակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ պարտադիր է ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննումը և համապատասխան մասնագետի (երկրաբան) կողմից կազմված եզրակացությունը,

- կտեղադրվեն տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է շենքի նախագծողի, կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն:

- շինհրապարակը կկազմակերպվի հակահրդեհային անվտանգության պաշտպանության կանոններին համապատասխան, տեղադրվելու է ջրի բաք՝ հրդեհամարման նպատակով,

- շինհրապարակն ապահովվել հակահրդեհային վահանակով, կրակմարիչներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով,

- շինհրապարակն, ինչպես նաև բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունները ժամանակ առ ժամանակ մաքրել հրդեհավտանգ և պայթուցավտանգ թափոններից և աղբից,

- տեղադրել ձայնային ազդանշաններ, հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար,

- հեղուկ և վտանգավոր նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել:

Շահագործման փուլ. Շահագործման փուլում արտակարգ իրավիճակներ կարող են առաջանալ՝ սարքավորումների շահագործման ժամանակ հնարավոր վթարային իրավիճակների, հոսքագծերի անսարքության, տեխնոլոգիական ցկլի, աշխատանքի ռեժիմի խաթարման, (հոսանքի մատակարարման խափանումներ), թափոնների կուտակման, տեղափոխման հետ:

Շահագործման փուլում արտակարգ իրավիճակների կանխարգելման համար նախատեսվում է.

- պարբերաբար իրականացնել սարքավորումների հսկում, դրանց հերմետիկության ստուգումներ,

- հոսքագծերի սպասարկումը և շահագործումն իրականացնել միայն մասնագիտական պատրաստվածություն ունեցող մասնագետների կողմից,

- արտադրամասն ապահովված է լինելու հակահրդեհային համակարգով, ներքին տեղադրման հակահրդեհային կրակմարիչներով(14հատ), հիդրատներով՝ 2 հատ, օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային՝ հակաձխային, արտածման համակարգերով, էվակուացիոն ուղիներով և էլքերով, ինչպես նաև համապատասխան վերահսկման սարքերով՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ,

- գործունեության տարածքում փակցնել արտակարգ իրավիճակների պլանը՝ ներառված անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակների, մարդու անվտանգությանն ուղղված միջոցառումները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Էներգախնայողություն և Էներգաարդյունավետություն.

Շենքի նախագծային լուծումները կատարվելու են հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12.04.2018թ N 426-Ն որոշմամբ սահմանված պահանջները՝ էներգախնայողության և էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված միջոցառումներին համապատասխան, ներառելով՝ ջեռուցման, տաք ջրամատակարարման, օդափոխման, լուսավորության համակարգերը:

Կառույցի երեսապատումը նախատեսվում է իրականացնել սենդվիչ-պանելներով, երեսապատելով բազալտե սալիկներով՝ 3 սմ հաստությամբ: Երեսապատման նյութերը լինելու են ջրամեկուսիչ և ջերմապահպան հատկություններով: Կառույցի երեսապատումը նախատեսվում է իրականացնել սենդվիչ-պանելներով մետաղական հիմնակմախքի վրա:

11.9 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն, մարդու առողջություն.

Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր են մարդու առողջությանը սպառնացող և աշխատանքի անվտանգության հետ կապված վտանգներ.

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ քաղաքաշինական, առողջապահական, բնապահպանական և այլ նորմերի խախտման, ոչ բավարար աշխատանքային պայմանների,
- թափոնների հավաքման, կուտակման, տեղափոխման,
- օգտագործվող հեղուկ նյութերի օգտագործման, պահպանման, տեղափոխման, շինտեխնիկայի շահագործման,
- արտակարգ իրավիճակների առաջացման, շինարարության ընթացքում մարդու անվտանգությանը, առողջությանը սպառնացող այլ երևույթների հետ:

Մարդու առողջության և աշխատանքի անվտանգության ռիսկերը նվազեցնելու նպատակով հայտում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

Շինաշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆՆԿ-3-480* նորմերի:

Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, շինհրապարակում՝ անվտանգության տեխնիկայի կանոնները անցումները, վտանգավոր զոնաները կցանկապատվեն,

- պահպանել ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,

- ապահովվել աշխատողների անվտանգությունը՝ Բարձրության վրա,

- մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների,

- բանվորական խմբերը լինելու են բազմապրոֆիլ և մասնագիտացված, անցկացվելու են ուսուցման և հրահանգավորման դասընթացներ,

- ստուգվելու են առասանիչ բանվորների գիտելիքները, տեղադրել առասանման եղանակների և ձևերի նկարագրությամբ ցուցանակներ,

- աշխատողների համար ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական և պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ, կոշիկ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով,

- ապահովել աշխատողների համար սանիտարական և հանգստի պայմաններով (հանգստի սենյակ, հանդերձարան, լվացարան և այլն)՝ անհրաժեշտ կահավորանքով

(վվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն),

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ,

- վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառել գործնետության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները,

- վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները,

- նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,

- շինհրապարակի լուսավորությունը ապահովել հավասարաչափ՝ լուսավորության 2 լյուքսից ոչ պակաս,

- շենքի ներսում եռակցման և ներկման աշխատանքները կատարել օդափոխության պայմաններում, հոսանքատար մասերի մեկուսացում,

- վարել տեխնիկական հսկողության ամփոփիչ և անհատական մատյաններ՝ տեխնիկական վերահսկողության իրականացման համար,

- շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացնել 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան, աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ:

Շահագործման փուլ.

-պահպանել ՀՀ Առողջապահության նախարարի 06.12.2010թ.-ի՝ «Կազմակերպությունների աշխատատեղերում աշխատանքային գոտու օդում քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները» N 2.2.5-004-10 սանիտարական կանոնները եվ նորմերը հաստատելու մասին N 27-Ն հրամանի պահանջները,

- պահպանել ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թ. մարտի 10-ի «Պարենային հումքի եվ սննդամթերքի անվտանգությանը եվ սննդային արժեքին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվները հաստատելու մասին» N 06-Ն հրամանի պահանջները,

- արտադրությունը կազմակերպել տվյալ ոլորտում գործող ՀՀ օրենսդրության՝ «Սննդամթերքի անվտանգության մասին», «Թափոնների մասին», «Կերի մասին» ՀՀ օրենքների, կառավարության որոշումների պահանջներին համապատասխան,

- ձկնամթերքում մարդու առողջության համար վտանգավոր՝ կենդանի մակաբույծների և դրանց թրթուրների առկայության դեպքում, կանխարգելող միջոցների ձեռնարկումը, օգտահանման համար ոչ պիտանի թափոնների խնամքով հեռացում և ոչնչացում,

- պահպանել արտադրանքի՝ հումքի, որակի, փաթեթավորման, պիտակավորման, մակնշման և ժամկետների, որակական հատկանիշների վերաբերյալ ՀՀ օրենսդրության պահանջները,

- բացառել ձկնամթերքի տեղադրումը գետնի վրա,

- պահածոները պահել նորմատիվ փաստաթղթերով սահմանված համապատասխան ռեժիմ (ջերմաստիճան, օդի խոնավություն) ապահովող չոր պահեստային սենքում,

- սարքավորումների, տարաների, տարաքճի ախտահանումը կատարել արտադրական ցիկլում առաջացող տաք գոլորշով, կրով և սողայով,

- օգտագործվող տարողությունները պետք է պատրաստված լինեն վերջինիս հետ շփման համար նախատեսված նյութերից,

- բացառել կոտրվածք, ճաք ունեցող տարաների օգտագործումը,

- արտադրանքը տեղափոխող տրանսպորտային միջոցները պետք է ապահովեն արտադրանքի որակական հատկությունների պահպանումը, սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմերը,

- կերի անվտանգության, կերի և կերային հավելումների նորմատիվային պահանջների ապահովում,

- կերերի փոխադրմանը և պահպանմանը ներկայացվող պահանջների կատարում,

- կերի պիտանելիության ժամկետը լրացած, վնասված փաթեթավորումով և մակնշումով կերի և կերային հավելումների իրացման և օգտագործման բացառում,

- վտանգավոր թափոնները ժամանակավոր կուտակել հատուկ հատկացված տեղերում, տեսակավորել, ելնելով վերջիններիս որակական հատկանիշներից,

- մինչև թափոնների տեղափոխելը, դրանք պահել փակ սենքերում, բացառելով կողմնակի մարդկանց մուտքը,

- ապահովել աշխատողների համապատասխան մասնագիտական որակավորումը, փորձը, անհրաժեշտության դեպքում պարբերաբար իրականացնել մասնագիտական դասընթացներ՝ աշխատողների մասնագիտական որակը բարձրացնելու նպատակով,

- աշխատողներին ապահովվել (ցնուդարան, լվացարան, խոհանոց, հանգստի սենյակ) համապատասխան սանիտարական պայմաններով, անհատական պաշտպանական միջոցներով (դիմակներ, ռետինե ձեռնոցներ, համապատասխան արտահագուստ, գլխարկ պաշտպանիչ ակնոցներ, կոշիկներ), առաջին բուժօգնության դեղարկղիկներով,

- կրծողների, միջատների դեմ պայքարի մանրէաբանական եղանակի կիրառման բացառում,

- աղբի ժամանակին հեռացում, տարողությունների լվացում և ախտահանում ախտահանիչ լուծույթով:

Շահագործման փուլում շենքն ապահովված է լինելու հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմաններով՝ ՀՀՇՆ 1/- 11.07.01-2006 շինարարական նորմերին համապատասխան:

11.10 Սոցիալական.

Շինարարության ընթացքում բացվելու են նոր աշխատատեղեր: Շինարարության փուլում առավելագույն հերթափոխում աշխատելու է 20 մարդ, որից՝ 15 բանվոր, 5-ը ճարտարապետա-տեխնիկական անձնակազմ: Աշխատելու են 6 օր՝ 8 ժամյա հերթափոխային գրաֆիկով:

Շինարարության ընթացքում առաջանալու են հարակից տարածքի բնակիչների տեղաշարժի ժամանակավոր անհարմարություններ, որոնք հնարավոր է կանխարգելել կառավարման պլանով նախատեսված միջոցառումների կատարման միջոցով: Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակում կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ կարգի խախտում չի նախատեսվում:

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական խնդիրներից խուսափելու համար նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները կատարել սահմանված ժամերին՝ ցերեկը,
- բացառել շինհրապարակից դուրս կենցաղային աղբի և շինաղբի, մեքենաների կուտակումները,
- գործելու է բողոքների արձագանքման ընթացակարգը:

Շահագործման փուլ.

- բացվելու են նոր աշխատատեղեր,
- բարելավվելու է բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները,
- ապահովվելու է բնակչության պահանջարկը որակյալ ձկնային սննդատեսակի նկատմամբ,
- ապահովվելու է կենդանական կերի պահանջարկը:

11.11 Լանդշաֆտ.

Գործունեության իրականացումն չի առաջացնելու լանդշաֆտի լրացուցիչ ծանրաբեռնվածություն, քանի որ կառուցապատված է, առկա է պահեստային շինություն: Նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում (ազդեցության գոտում) բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա հնարավոր վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը տարածքի վրա կլինի նվազագույն՝ կրելով սահմանափակ և կարճատև բնույթ:

Դրանք հնարավոր կլինի նվազեցնել շինարարության փուլում՝ բնապահպանական կառավարման պլանով նախատեսված միջոցառումների արդյունքում:


Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.

- շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են,
- շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է տարածքը,
- կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

11.12 Բարեկարգում և Կանաչապատում

Կառուցապատման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, ճանապարհների կարգաբերում, տարածքի բարեկարգում:

Կառուցապատման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է նաև գործունեության ենթակա ազատ տարածքի՝ 7446.4մ² մակերեսի վրա կատարել կանաչապատման աշխատանքներ՝ ներբակային գոտում: Կանաչապատման աշխատանքները կատարվելու են համաձայն՝ համայնքի հետ համաձայնեցված կանաչապատման նախագծի/կանաչապատման նախագիծը ներկայացվել է համայնքապետարանի համաձայնեցմանը/:



Տնկվելու են թվով 32 հատ ծառեր՝ պտղատու ծառեր՝ 15 հատ, թխկի՝ 10 հատ, տոյա՝ 8 հատ, թփերի տնկում՝ 150 հատ, կատարվելու է խոտի ցանք՝ ձեռքով 6800 մ² մակերեսի վրա: Բարեկարգման և կանաչապատման նպատակով նախատեսվում է.

- կառուցապատումից ազատ տարածքի մաքրում քարերից, հարթեցում և բարեկարգում, ներբակային ճանապարհների կառուցում,
- կանաչ զանգվածի ոռոգում՝ բուսականության աճը և կայունությանն ապահովելու նպատակով,
- նորատունկ բուսականության, ծառերի չկայչելու դեպքում նոր ծառատեսակներով

փոխարինում:

Կանաչապատման նպատակով օգտագործվող բուսահողը ձեռք է բերվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պայմանագրային հիմունքներով:

Ոռոգման նպատակով ջրապահանջը որոշվում է СНиП 2.04.02-84-ի համաձայն, այսինքն, 1մ² ոռոգման նպատակով անհրաժեշտ է 0,3-0,4լ ջուր, հետևաբար.

$$W = (M \times 0,4) \times m$$

Որտեղ, M – կանաչապատման ենթակա տարածքն է ըստ կանաչապատման տեսակային կազմի,

m – ոռոգման հաճախականությունը կախված սեզոնից և կլիմայական առանձնահատկությունից,

հետևաբար,

$$W = 7446,4 \times 26 = 193.606 \text{լ/ տարի կամ } 193,6 \text{ մ}^3 \text{/տարի ջուր:}$$

Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է բերովի ջրով, պայմանագրային եղանակով:

12. Մոնիթորինգ

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հսկողություն իրականացնող այլ մարմինների կողմից նախատեսվող կանոնավոր հսկողություն է: Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մոնիթորինգ:

Այդ նպատակով նախատեսվում է.

- համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում,
- բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության, տեխնիկական վերահսկողության իրականացում՝ ամենօրյա ռեժիմով,
- բոլոր աշխատողների աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին իրազեկում,
- տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունը կամ անձը պարտավոր է ժամանակին Ձեռնարկողին և/կամ նախագծային կազմակերպությանը տեղեկացնել նկատած անհամապատասխանությունները,
- շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանում, հակահրդեհային պահանջների՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերի համապատասխանության ապահովում,
- թափոնների տեղափոխման կազմակերպում՝ համապատասխան պայմանագրերի հիման վրա,

- կապալառուի կողմից նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատշաճ իրականացում,
- շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառվելու նպատակով,
- շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորում և յուղում շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում,
- արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձի նշանակում, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում,
- շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանում,
- բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացում, ապահովվելով կանաչապատ տարածքի համապատասխանությունը կանաչապատման նախագծին,
- կանաչ զանգվածի վիճակի մշտադիտարկում, ծառերի կաչողականության ուսումնասիրություն՝ ծառերի աճն ապահովվելու նպատակով:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվելու են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շահագործման փուլում անհրաժեշտ է ապահովվել կերի արտադրության համար օգտագործվող հումքի, ջրի, օժանդակ նյութերի, կերային հավելումների և վերամշակված կերի նորմատիվ իրավական ակտերով և պահման պայմաններին ներկայացվող պահանջները:

Աղմուկի մակարդակի վերահսկում, աշխատանքներն իրականացնել ոլորտին առնչվող ՀՀ –ում գործող համապատասխան նորմերի պահանջներին համապատասխան:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսված ծախսերը կազմում են տարեկան մոտ 350.0-400.0 հազար դրամ, ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

13. Բողոքների ընթացակարգ

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կներդրվի բողոքների արձագանքման մեխանիզմ (ԲԱՄ), որը հիմնականում ուղղված կլինի շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը:

Շինարարական տեղամասում ապահովվելու է կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները),

հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը:

14. Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան

Աղյուսակ 7

№	Գործունեության տարածքում ազդեցության ենթակա շրջակա միջավայրի բաղադրիչները և ազդող գործոնները	Մեղմող միջոցառման անվանումը	Միջոցառման իրականացման պատասխանատու	Վերահսկող
	<p>Օդային ավազան</p>	<p>Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում՝ գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան, - շինհրապարակը կցանկապատվի, մեքենաները շին. հրապարակ մտնելու և դուրս են գալու մաքուր վիճակում, - գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով, - շինհրապարակում սորուն նյութերը պահվել ժամանակավոր պահեստներում կամ ժամանակավոր ծածկի տակ՝ ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով, - բացառվել տարածքում թափոնների բաց այրումը, 	<p>Կապալառու</p>	<p>«Բնվեստ Պլյուս» ՍՊԸ</p>

		<p>- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում,</p> <p>- բացառել անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:</p> <p>Շահագործման փուլում օդային ավազան վտանգավոր նյութերի արտաներումներ չեն կանխատեսվում:</p>		
2	Հողային ռեսուրսներ	<p>Գործունեության իրականացման հետևանքով հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է.</p> <p>- շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով,</p> <p>- հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,</p> <p>- շինհրապարակն ապահովված է լինելու արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար,</p> <p>- շինարարական նյութերը տեղադրել</p>	Կապալառու	«Ինվեստ Պլուս» ՍՊԸ

	<p>հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,</p> <ul style="list-style-type: none"> - նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը, - շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում, - այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է ավագ կամ մանրախիճ, - մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում, փոխված ավագը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և այն փոխարինվելու է նորով, - մեքենաների անիվների լվացումը կատարել անիվների լվացման հարթակում. -բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարվելու է մինչև շինհրապարակից վերջիններիս դուրս գալը: <p>Շահագործման փուլում հողային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցությունն չի կանխատեսվում, քանի որ գործունեությունն իրականացվելու է փակ և ցանկապատված</p>		
--	---	--	--

3	Ջրային ռեսուրսներ	<p>արտադրական տարածքում:</p> <p>Գործունեության իրականացման ընթացքում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են.</p> <ul style="list-style-type: none"> - փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր, - անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող պարզարան, - ջրցանման համար օգտագործվելու է միայն տեխնիկական որակի ջուր և պարզարանում կուտակված ջուրը, -տեխնիկական ջուրը բերվելու է մասնագիտացված և լիցենզիա ունեցող անձանց կամ ընկերությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Վերջիններիս հետ պայմանագրերը կկնքվեն շինարարական աշխատանքների սկսման փուլում, - պարզարանում մեխանիկական նստեցման հետևանքով առաջացած տիղմը՝ որպես շինադր, ժամանակ առ ժամանակ տեղափոխվելու է աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով, - շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի 	Կապալառու	«Ինվեստ Պլյուս» ՍՊԸ
---	-------------------	--	-----------	---------------------

		<p>վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով:</p> <p>Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվելու է.</p> <p>- շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող սանհանգույցից՝ բիոզուգարանից:</p> <p>Շահագործման փուլ.</p> <p>Արտադրամասի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը պետք է համապատասխանեն 2.04.01-85 «Շենքերի ներքին ջրամատակարարում և կոյուղի», 2.04.02-84 «Ջրամատակարարում: Արտաքին ցանցեր և կառույցներ», ՄՆԻՊ-ների պահանջներին:</p> <p>Անհրաժեշտ է պահպանել ՀՀ կառավարության 2019թ. հունվարի 17-ի «ՋՐԱԽՆԱՅՈՂ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՑ ԲԽՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 39-Լ որոշման V գլխի պահանջները:</p> <p>Արտադրությունում տարրաների լվացումից, հոսքազծերի ախտահանումից առաջացած հոսքաջրերն ուղղորդվելու են սեպտիկ հոր:</p> <p>- հեռացվող կեղտաջրերի խառնուրդի ակտիվ ռեակցիան(pH) կպահպանվի 6.5-9.0 սահմաններում, ինչպես նաև կախյալ նյութերի</p>		
--	--	--	--	--

		<p>և այլ խառնուրդների պարունակությունները, կեղտաջրերի ջերմաստիճանը չպետք է գերազանցի 40°C:</p>		
4	<p>Թափոններ</p>	<p>Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ պահել թափոնների կուտակումներից, - շին հրապարակի տարածքում հստակեցվելու է շին աղբի նախնական կուտակման վայրը, - շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայրում, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր, - շինաղբի տեղափումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով, - կենցաղային աղբի և շինաղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության, - կենցաղային աղբը հավաքվելու է տարածքում տեղադրված աղբարկղերի մեջ և 	<p>Կապալառու</p>	<p>«Ինվեստ Պլուս» ՍՊԸ</p>

	<p>ընկերության սեփական բեռնատարներով տեղափոխվելու է համայնքի հետ համաձայնեցված աղբավայր,</p> <ul style="list-style-type: none"> - Բացառել աղբի կուտակումը շիհրապարակից դուրս՝ այլ հասարակական տարածքներում, - մետաղական մասերը կառանձնացվեն և որպես մետաղի ջարդոն կհանձնվեն հատուկ մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով, - յուղոտված լաթերը 1/10 հարաբերակցությամբ կխառնվեն կենցաղային աղբին և կտեղափոխվեն կենցաղային աղբավայր կամ կհանձնվեն մասնագիտական կազմակերպություններին, - շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական նյութերի մնացորդները (ասֆալտբետոն, ավազ, սալիկներ և այլն), վտանգավոր նյութերը(ներկեր, սոսինձ, մաքրող հեղուկներ և այլն) հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալատուի կողմից: <p>Շահագործման փուլ.</p> <ul style="list-style-type: none"> - Բացառել թափոնների պահումը Բաց տարածքում՝ արևի ուղիղ ճառագայթների տակ, -թափոնները պահել հատուկ հերմետիկ 		
--	---	--	--

	<p>փակվող տարաներում, սառը և չոր, լավ օդափոխվող տարածքում՝ շրջակա միջավայրը՝ հողային, ջրային ռեսուրսները աղտոտումից պահպանելու նպատակով,</p> <p>- պոլիէթիլենային փաթեթները, խոտանված պլաստիկե և ապակյա տարաները, պիտակները հանձնվելու են ՀՀ կառավարության կողմից հաստատված՝ վտանգավոր թափոնների պահման, հավաքման, տեղափոխման, վերամշակման համապատասխան լիցենզիա ունեցող մասնագիտական ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով,</p> <p>- հնարավոր վթարների դեպքում՝ ախտահանվում և լվանում են անհրաժեշտ քանակության չեզոքացման միջոցներով՝ կիր, սոդա, տաք գոլորշով,</p> <p>- թղթի թափոնները հանձնվում են թղթի վերամշակման ձեռնարկություններին,</p> <p>- թափոնների հետ առնչվող աշխատողները կապահովվեն հատուկ պաշտպանիչ արտահագուստով՝ ձեռնոցներ, ակնոցներ, երկարաճիտ կոշիկներ և այլն:</p> <p>Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր է առաջանան նաև թափոններ՝ մետաղական մասերի տեսքով, կապված տարբեր սարքավորումների փչանալու կամ վերանորոգման հետ: Այն մետաղյա մասերը,</p>		
--	---	--	--

		որոնք ենթակա չեն վերանորոգման՝ հանձնել համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին: Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել պլաստմասե աղբամաններ, ինչպես նաև տեսակավորման աղբամաններ:		
5	Աղմուկ և թրթռում	<p>Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - պահպանել աղմուկի, վիբրացիայի թույլատրելի նորմերը, - շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին, - կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում, - շինարարական աշխատանքներում ներգրավվել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, - տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում, - պարբերաբար ստուգել և կարգաբերել տրանսպորտային միջոցների շարժիչները, - բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը 	Կապալառու	«Ինվեստ Պլուս» ՍՊԸ

		<p>բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,</p> <ul style="list-style-type: none"> - օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով: <p>Շահագործման փուլում նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - օդափոխման և օդի լավորակման համակարգերում աղմուկի խլացուցիչների կիրառում, - բացառել աշխատատեղերում սարքավորումներից աղմուկի մակարդակի 80դԲ (A) և ավելի գերազանցումը, - գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն), - արտադրական տարածքում աղմուկի մակարդակի պարբերաբար չափագրումներ, հոսքագծերի սարքին վիճակում պահպանում, վերահսկում: 		
6	Պատմամշակութային և բնության հուշարձաններ	<p>Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների</p>	Կապալառու	«Ինվեստ Պլուս» ՍՊԸ

		պահպանության վարչությանը՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:		
